

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Երևան 2013
«Աստղիկ» հրատարակչություն

Յեղինակային խումբ՝

Ա. Ղազարյան, փորձագետ
Ա. Չեյնայան, փորձագետ

The research and publication has been made possible with the support of the OSCE Office in Yerevan. The views expressed herein are those of the authors and do not necessarily reflect the views of the OSCE.

Յետազոտությունը և գրքի հրապարակումը իրականացվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ: Յետազոտությունում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները պատկանում են հեղինակային խմբին և կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի տեսակետներին:

/ Ա.Ղազարյան, Ա.Չեյնայան

ՀՀ փաստաբանների պալատ:.- Երևան.: Ասողիկ, 2013.- 112 էջ:

Յետազոտությունը ներկայացնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի վերաբերյալ մինչև 2013թ. հոկտեմբերի 10-ը կայացած 48 վճիռների կատարման գործընթացի վերլուծություն: Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերահսկողության վարույթը շարունակական գործընթաց է, նշված ժամանակահատվածից հետո կոնկրետ գործերով տեղի ունեցած զարգացումները հետազոտության մեջ արտահայտված չեն:

Յետազոտությունը կարող է օգտակար լինել դատավորների, փաստաբանների, դատախազների, դասախոսների, ՀՀ նախարարությունների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում Հայաստանի կառավարությունը ներկայացնող անձանց կամ մարմինների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և անձանց, ինչպես նաև միջազգային կառույցների համար:

ISBN 978-92-9234-275-3

© Յեղինակային խումբ, 2013
© OSCE, 2013



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Մեթոդաբանություն.....	7
1. Եւ Նախարարների կոմիտեի վերահսկողական Նոր ընթացակարգերը.....	8
2. Գործողությունների ծրագրի տրամադրումը.....	12
3. Գործողությունների զեկույցի տրամադրումը	14
4. Այլ տեղեկությունների տրամադրումը	14
5. Անհատական բնույթի միջոցներ	17
5.1. Գործերի վերաբացում	17
5.2. Փոխհատուցման գումարների վճարումը	19
6. Ընդհանուր բնույթի միջոցներ	
6.1. Օրենսդրական փոփոխություններ և ներպետական պրակտիկա	20
6.1.1. Վարչական կալանք	20
6.1.2. Խոշտանգմամբ ստացված ապացույցի օգտագործում	20
6.1.3. Դատական նիստի ծանուցում	21
6.1.4. Այլընտրանքային զինվորական ծառայություն	22
6.1.5. Խափանման միջոց կալանք	24
6.1.6. Բարոյական վնասի դիմաց նյութական փոխհատուցում	28
6.1.7. Սեփականության օտարում	29
6.1.8. Վճիռների թարգմանում ու տարածում	30
6.1.9. Վճիռների ընդգրկելը դասընթացների ծրագրերում և դրանց հանրային իրազեկումը	31
7. Ավարտված վարույթներ	
7.1. Մկրտչյան ընդդեմ Հայաստանի	32
7.2. Նիկողոսյանը և Մելքոնյան ընդդեմ Հայաստանի	33
7.3. Պայքար և հաղթանակ ՍԴԸ-ն ընդդեմ Հայաստանի	35

7.4. Միշա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի	36
7.5. Մելտեքս ՄՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի	38

8. Հավելվածներ

Հավելված 1. Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)3 հանձնարարական	45
Հավելված 2. Նախարարների կոմիտեի Rec(2003)17 հանձնարարական	49
Հավելված 3. Նախարարների կոմիտեի Rec(2003)16 հանձնարարական	56
Հավելված 4. Գործողությունների վերաբերյալ գեկույց (Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի, Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի, Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի գործերով)	62
Հավելված 5. Գործողությունների վերաբերյալ գեկույց (Մինասյանի և Սեմերջյանի գործով խումբ)	65
Հավելված 6. Գործողությունների ծրագիր (Բայաթյանի գործով խումբ)	68
Հավելված 7. Գործողությունների ծրագիր (Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով)	74
Հավելված 8. Եհովայի քրիստոնյա վկաների եվրոպական ասոցիացիայի հաղորդումը	80
Հավելված 9. 2012թ. հուլիսի 12-ին կայացրած ՄԻԵԴ վճռի կատարման վերաբերյալ տեղեկատվություն (Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի գործով)	84
Հավելված 10. 2012թ. հոկտեմբերի 9-ին կայացրած ՄԻԵԴ վճռի կատարման վերաբերյալ տեղեկատվություն (Թունյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով)	87

9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման մոնիթորինգ

9.1. Ընթացքի մեջ գտնվող վարույթներ (2013թ. հուլիսի 10-ի դրությամբ)	89
9.2. Ավարտված վարույթներ.....	106

Ներածություն

Այս հետազոտությունն անցկացվել է ՀՀ փաստաթանների պալատի կողմից՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում: Եվրոպական դատարանի վճիռների կատարման սույն հետազոտությունը 2010թ. ՀՀ փաստաթանների պալատի կողմից իրականացված մոնիթորինգի շարունակությունն է: Այդ ժամանակից ի վեր Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների քանակը գրեթե կրկնապատկվել է: Եթե նախորդ մոնիթորինգով հետազոտվել են 26 վճիռների կատարման գործընթացները, ներկայումս վճիռների քանակը հասնում է 48-ի, որոնցից 38-ի նկատմամբ սկսվել է կատարողական վարույթը, 3-ի առնչությամբ վարույթն ավարտվել է, իսկ մնացած 7 գործի առնչությամբ կատարման վարույթները դեռ չեն սկսել, քանի որ որոշումները դեռ ուժի մեջ չեն մտել կամ դրանք դեռ չեն փոխանցվել Կոմիտեի իրավասության տակ:

Առաջին մոնիթորինգից ի վեր անցել է կարճ ժամանակ, սակայն այդ ընթացքում տեղի են ունեցել նկատելի փոփոխություններ: 2010 թվականի հունիսին թիվ 14-րդ Արձանագրության ընդունումից հետո, զգալի փոփոխությունների են ենթարկվել վերահսկող մարմնի՝ ԵՆ Նախարարների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վերահսկողական ընթացակարգերը: 2011 թվականի հունվարից ներմուծվել է վերահսկողության երկուղի համակարգ՝ սովորական (ստանդարտ) և խստացված: Առաջինը նախատեսում է վճռի կատարման թույլ վերահսկողություն՝ Կոմիտեի նվազագույն միջամտությամբ: Երկրորդը նախատեսում է Կոմիտեի լայն միջամտության հնարավորություն և նախատեսվում է այնպիսի գործերի համար, որոնցում կամ անհրաժեշտ է անհապաղ կիրառել անհատական միջոցներ կամ որոնք բարձրացնում են համակարգային խնդիրներ ներպետական օրենսդրության մեջ կամ պրակտիկայում: Ընթացքի մեջ գտնվող 38 գործերից 12-ը քննվում են խստացված ընթացակարգի ներքո:

Փոփոխություններ են տեղի ունեցել նաև ներպետական պրակտիկայում և օրենսդրության մեջ: 2010-2013թթ.-ի ընթացքում ՀՀ Սահմանադրական դատարանը մի քանի անգամ անդադարձել է Եվրոպական դատարանի որոշումների հիման վրա «նոր հանգամանքի» հիմքով գործերի վերաբացման վարույթները կարգավորող մի շարք օրենսդրական նորմերի (և՛ բաղաբացիական, և՛ բրեական դատավարության ներքո) սահմանադրակա-

նության հարցին: Իր հերթին ՀՀ վճռաբեկ դատարանը սկսել է ավելի հաճախ անդրադառնալ գործի վերաբացման դիմումներին, որոնք հաջորդում են, որպես կանոն, կամ Սահմանադրական դատարանի, կամ Եվրոպական դատարանի որևէ որոշմանը: Այս ամենի արդյունքում օրենսդիրը մի քանի անգամ փոփոխություններ է կատարել կարգավորող նորմերով, որոնց արդյունքում բարելավվել են ՄԻԵԴ վճիռների հիման վրա գործերի վերաբացման օրենսդրական հիմքերը: Անհրաժեշտ է նշել, որ օրենսդրական բարեփոխումների մի մասի հիմքերը մատնանշվել էին դեռ նախորդ հետազոտության արդյունքներում: Այդուհանդերձ, չնայած վերը նշված դրական զարգացումներին, դեռ վաղ է նշել ՄԻԵԴ վճիռների կատարման համընդհանուր դրական պրակտիկայի մասին Հայաստանի Հանրապետության կողմից: Հենց թեկուզ այն հանգամանքը, որը 2007 թվականի ապրիլից ի վեր (երբ ուժի մեջ մտավ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված առաջին վճիռը և սկսվեց առաջին գործով առաջին կատարողական վարույթը¹) ամբողջությամբ կատարված են համարվում միայն երեք վճիռներ,² արդեն իսկ խոսում է վճիռների կատարման ոչ բավարար արագության մասին: Ավելին, կան մի շարք գործեր, որոնց մասին կիսովի առանձին կարգով, որոնց առումով արդեն մոտ երեք տարի որևէ գործողություն չի կատարվել ոչ՝ Կոմիտեի, ոչ կառավարության կողմից: Նման փաստերը բնավ չեն խոսում վճիռների կատարման արդյունավետ համակարգի մասին:

Նախորդ ուսումնասիրության մեջ մենք փաստել էին վճիռների կատարման ոչ բավարար վիճակի մասին և նշել, որ անհրաժեշտություն է առաջանում իրականացնել գործող օրենսդրության շարունակական կատարելագործում և դրանց համապատասխանեցումը ՀՀ մասնակցությամբ միջազգային կազմակերպությունների հանձնարարականների պահանջներին: Այսօր մենք կարող ենք փաստել, որ նշված խնդիրները մեծամասամբ կատարված են և եթե վճիռների կատարման ներկայիս ընթացքը դեռ ցանկալի արդյունքը չի տալիս, անհրաժեշտ է երկուստեք, ՀՀ կառավարության և Կոմիտեի կողմից, առավել մեծ ջանքեր ու ռեսուրսներ ներդնել, որպեսզի ապահովվի վճիռների կատարման արդյունավետ արդյունքներ:

¹ Սկրոչյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 6562/03, 11/01/2007:

² Սկրոչյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 6562/03, 11/01/2007: Սիշա
Հարությունյանն ընդդեմ Հայաստանի, 36529/03, 28/06/2007: Մելտեքս ՍՊԸ-ն
և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, 32282/04,
16/06/2008:

Մեթոդաբանություն

Նախորդ մոնիթորինգը բաղկացած էր երեք բաժիններից, որոնցից առաջինը ներառում էր համառոտ տեղեկություններ Կոմիտեի վերահսկողական ընթացակարգերի մասին, երկրորդ բաժինը ներառում էր յուրաքանչյուր գործի փաստերի համառոտ շարադրանքը և Կոմիտեի՝ տվյալ գործով վարույթի մանրամասն շարադրանքը, իսկ երրորդ բաժինը՝ Կոմիտեի փաստաթղթերի հավելվածներ: Այսպիսով, հետազոտության հիմնական միջուկը երկրորդ բաժինն էր, որում հետազոտությունը բաժանված էր ըստ գործերի: Ի տարբերություն նախորդի, սույն հետազոտությունը որոշվեց կազմակերպել ոչ թե ըստ գործերի, այլ ըստ թեմատիկ ոլորտների: Գտնում ենք, որ այդ եղանակով հետազոտության արդյունքները ավելի մատչելի ու դյուրին կլինեն ընթերցողի համար: Եթե նախորդի դեպքում միայն որոշակի քանակով գործեր ուսումնասիրելուց հետո էր հնարավոր հանգել կոնկրետ եզրակացության կատարողական վարույթի արդյունավետության կամ խնդիրների մասին, հետազոտության շարադրանքը ըստ թեմատիկ ոլորտների հենց սկզբից տալիս է իրերի ամբողջական վիճակը: Ի հավելումս, այս հետազոտության մեջ չի ներառվել Կոմիտեի վերահսկողական ընթացակարգերի մասին մանրամասն տեղեկություն, այլ համառոտ կերպով նշվել են միայն նոր ընթացակարգերի մասին, որոնք սկսել են կիրառվել 2011 թվականի հունվարից:

1. ԵՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՎԵՐԱԽՍԿՈՂԱԿԱՆ ՆՈՐ ԸՆԹԱԳԱԿԱՐԳԵՐՆԸ

=====

2011 թվականի հունվարից սկսել են կիրառվել Կոմիտեի վերահսկողական Նոր ընթացակարգերը: Սահմանվել է վերահսկողության երկուդի համակարգ, ըստ որի բոլոր գործերի վերահսկողությունը կատարվելու է **ստանդարտ** ընթացակարգի համաձայն, քանի դեռ, հաշվի առնելով գործի առանձնահատկությունը, որոշում չի կայացվում վերահսկողությունը իրականացնել **խստացված** ընթացակարգով: Խստացված ընթացակարգով նախատեսվում է վերահսկել.

1. վճիռներ, որոնք պահանջում են անհատական միջոցների անհապաղ իրականացում,
2. պիլոտային վճիռներ,
3. վճիռներ, որոնք վերհանում են համակարգային խնդիրներ ներպետական օրենսդրության մեջ կամ պրակտիկայում,
4. միջպետական գանգատների առումով կայացված վճիռներ:

Խստացված ընթացակարգ կարող է կիրառվել նաև Կոնվենցիայի անդամ պետության կամ Զարտուղարության կողմից պահանջի հիման վրա:

Խստացված կամ ստանդարտ ընթացակարգ կիրառելու մասին որոշումը կայացվում է Կոմիտեի կողմից գումարվող նիստերի ընթացքում: Սկզբունքորեն, այս երկուսը փոխկապակցված վարույթներ են և կարող են անցումներ կատարվել ինչպես ստանդարտ ընթացակարգից խստացված ընթացակարգի, այնպես էլ հակառակը:

Վճռի ուժի մեջ մտնելուց հետո մինչև վեց ամսվա ընթացքում պատասխանող պետությունը պարտավոր է ներկայացնել Գործողությունների ծրագիր, որում շարադրում է, թե ինչ **անհատական** և **ընդհանուր** բնույթի գործողություններ է նախատեսում կիրառել տվյալ գործով վճռի կատարումն ապահովելու նպատակով:³ Այս փուլում Կոմիտեի վերահսկողությունը ֆորմալ բնույթի է և ներառում է միայն ստուգելը, որպեսզի Գործողությունների ծրագիրը ժամանակին ներկայացվի: Գործողությունների ծրագրի ստանալուց հետո Զարտուղարությունը ուսումնասիրում է ծրագրում առաջարկվող բոլոր գործողությունները և դրանց համար նախատեսվող ժամանակացույ-

³ Անհատական և ընդհանուր բնույթի միջոցների մանրամասն նկարագրությունը տրված է Նախորդ ուսումնասիրությունում:

ցը և անհրաժեշտության դեպքում կապի մեջ մտնում կառավարության հետ՝ պարզաբանումների կամ ճշգրտումների համար: Այս հատվածում Զարտուղարությունը կարող է խորհուրդներ ու առաջարկներ ներկայացնել կառավարությանը ծրագրի կետերի վերաբերյալ՝ ընդհուպ մինչև որոշ ծավալուն հարցերի վերաբերյալ համատեղ կլոր-սեղան քննարկումների, սեմինարների կազմակերպում: Գործողությունների ծրագրի մասին պետության հետ վերջնական համաձայնություն ձեռք բերելուց հետո Զարտուղարությունն առաջարկում է Կոմիտեին առաջիկա նիստերից մեկում (ոչ ուշ, քան Գործողությունների ծրագիրը ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում) ընդունել ծրագիրը: Կոմիտեն նիստում ընդունում է որոշում ծրագիրն ընդունելու մասին և առաջարկում պատասխանող պետությանը պարբերաբար տեղեկացնել Գործողությունների ծրագրի իրականացման մասին:

Երբ պետությունը գտնում է, որ ծրագրի բոլոր կամ որոշ կետերը կատարված են, ներկայացնում է Գործողությունների զեկույց Զարտուղարությանը: «Գործողությունների զեկույցը» նոր հասկացություն է, որն առաջարկել է կիրառել Մարդու իրավունքների գլխամասային կոմիտեն (CDDH) 2009 թվականին:⁴ Ընդ որում, Գործողությունների ծրագիրը կարող է ներկայացվել Գործողությունների զեկույցի հետ միասին և եթե ծրագրում շարադրվում է կատարվելիք բայլերի ու դրանց ժամանակացույցի մասին, զեկույցում տրամադրվում է տեղեկատվություն, թե ինչ բայլեր են արդեն կատարվել:⁵ Զարտուղարությունն ուսումնասիրում է զեկույցը և եթե գտնում է, որ պետությունն իրավամբ կատարել է ծրագրի բոլոր կետերը, զեկույցը ներկայացնելուց հետո վեց ամսվա ընթացքում դիմում է Կոմիտեին՝ առաջարկելով առաջիկա նիստում ընդունել որոշում վճռի կատարման և վարույթի ավարտման մասին:

Վերը նշված ընթացակարգը չի նշանակում, որ բոլոր կարևոր որոշումները Գործողությունների ծրագրի ու զեկույցի բովանդակության մասին պետք է ընդունվեն Կոմիտեի նիստերի ընթացքում՝ քննարկումների արդյունքում: Այս առումով Զարտուղարությունը Կոմիտեից ստացել է լայն լիազորություններ նշված փաստաթղթերի նախագծերը տվյալ պետության կառավարության հետ բանակցելու վերաբերյալ և ավելի հաճախ Գործողությունների ծրագիրը կամ զեկույցը ընդունվում է Կոմիտեի նիստում առանց

⁴ Տե՛ս Նախարարների կոմիտեի CM/Inf/DH(2009)29rev փաստաթուղթը:

⁵ Համաձայն վերը նշված փաստաթղթի, Գործողությունների զեկույցը «տեղեկություն է, որը տրամադրվում է պատասխանող պետության կողմից, որով շարադրում է, թե ինչ միջոցներ են իրականացվել վճիռը կատարելու ուղղությամբ, և/կամ բացատրությունները, թե ինչու անհրաժեշտություն չկա հավելյալ միջոցներ կիրառել»: Այսպիսով, ի տարբերություն Գործողությունների ծրագրի, որը նախատեսում է կոնկրետ գործողությունների ծրագիր և ժամանակացույց, զեկույցը զուտ տեղեկատվություն է:

քննարկումների, քանի որ ակնկալվում է, որ բոլոր վիճելի հարցերը լուծվել են Զարտուղարության կողմից: Այդուհանդերձ, և՛ Զարտուղարությունը, և մասնակից պետությունը կարող են պահանջել անցկացնել քննարկումներ կոնկրետ փաստաթղթի կամ գործի առումով: Այդ դեպքում նիստից մեկ ամիս առաջ Զարտուղարությունը Կոմիտեի նիստի մասնակիցների համար նախօրոք պատրաստում է քննարկման համար նախատեսվող գործերի ցուցակը և դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ:

Նիստի ընթացքում Կոմիտեն կարող է որոշում կայացնել ստանդարտ ընթացակարգից խստացված ընթացակարգի անցնելու վերաբերյալ, ինչպես նաև հակառակը: Բնականաբար, եթե Կոմիտեն բավարարված է վճռի կատարման գործողություններով, որոշում է կայացնում անցնել խստացված ընթացակարգից ստանդարտ ընթացակարգի, իսկ եթե բավարարված չէ պետության կողմից վճռի կատարման քայլերով, որոշում է կայացնում ստանդարտ ընթացակարգից անցնել խստացված ընթացակարգի:

Ներկայացված զեկույցի առումով Կոմիտեն կարող է նիստի ընթացքում նաև հանձնարարել Զարտուղարությանը մանրամասն ուսումնասիրել ներկայացված զեկույցը և հաջորդ նիստին ներկայացնել գրավոր եզրակացություն զեկույցի վերաբերյալ: Օրինակ, Մինասյանի/Սեմիրջյանի գործով (Հյուսիսային պողոտայի գործերի շարքում առաջին վճիռը) ՀՀ կառավարությունը 2013թ. մայիսի 21-ին ներկայացրել է Գործողությունների զեկույց, որը Կոմիտեն հանձնարարել է Զարտուղարությանը ուսումնասիրել և 2013թ. դեկտեմբերի նիստի համար պատրաստել գրավոր եզրակացություն զեկույցի վերաբերյալ:

Եթե վճռի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում պետությունը Գործողությունների ծրագիր և Գործողությունների զեկույց չի ներկայացնում, Զարտուղարությունն ուղարկում է հիշեցում: Եթե նշված փաստաթղթերը կրկին չեն ներկայացվում հիշեցումից հետո երեք ամսվա ընթացքում, Զարտուղարությունն առաջարկում է անցնել խստացված ընթացակարգի: Խստացված ընթացակարգի անցում է կատարվում նաև այն դեպքում, երբ Զարտուղարությունը և կառավարությունը չեն կարողանում համաձայնություն ձեռք բերել Գործողությունների ծրագրի կամ զեկույցի վերաբերյալ: Այս դեպքում Կոմիտեն որոշում է կայացնում անցնել խստացված ընթացակարգի, որի ընթացքում Կոմիտեն անցնում է վերահսկողության ավելի ակտիվ եղանակի՝ պատասխանող պետությանը առաջարկելով կատարել կոնկրետ քայլեր և դա ներկայացնելով որպես իրավիճակից էլք գտնելու ուղղությամբ ցուցաբերված աջակցություն: Իր ամբողջության մեջ, երկուլի ընթացակարգը ունի հետևյալ տեսքը.⁶

⁶ Եւ Նախարարների կոմիտեի թիվ CM/Int/DH(2010)37 փաստաթուղթ, էջ 9:

Մտանդարտ ընթացակարգ	Փոխանցում	Խստացված ընթացակարգ
Որոշումը դառնում է վերջնական		Որոշումը դառնում է վերջնական
 6 ամիս  6 ամիս		
Ներկայացվում է գործողությունների ծրագիրը	Ներկայացվում է գործողությունների ծրագիր	• Եթե չի ներկայացվում, ֆարտուղարությունն ուղարկում է հիշեցում
 Միջոցներ կիրառելու ժամանակահատված		• Եթե կրկին չի ներկայացվում • Ներկայացվում է, սակայն պետության և ֆարտուղարության միջև առկա է անհամաձայնություն առաջարկվող քայլերի վերաբերյալ • Եթե Գործողությունների ծրագրում առաջարկված քայլերի կիրառումը լրջորեն ձգձգվում
Ներկայացվում է գործողությունների ծրագիրը	Գործը փակված է (առաջիկա Կոմիտեի նիստում, սակայն ոչ ուշ քան վեց ամսվա ընթացքում)	• Եթե Կոմիտեն բավարարված է Գործողությունների ծրագրով և/կամ դրա կիրառումով • Կատարման հարցում առկա խոչընդոտները վերացվել են • Անհապաղ անհատական միջոցները կիրառվել են
		
Վարույթն ավարտված է (Կոմիտեի առաջիկա նիստում, սակայն ոչ ուշ քան վեց ամսվա ընթացքում)		Վարույթն ավարտված է

2. Գործողությունների ծրագրի տրամադրումը

Վճիռների կատարման վերահսկողության նոր կարգի համաձայն, վճռի ուժի մեջ մտնելուց հետո առավելագույնը վեց ամսվա ընթացքում պատասխանող պետությունը պարտավոր է Նախարարների կոմիտեին ներկայացնել Գործողությունների ծրագիր (action plan):⁷ Գործողությունների ծրագրով պետությունը ներկայացնում է, թե ինչ անհատական և ընդհանուր բնույթի միջոցներ է վերջինս նախատեսում իրականացնել վճռի կատարման նպատակով: Այս փուլը նոր երկուլի համակարգի առաջին փուլն է, որը կոչվում է «ստանդարտ վերահսկողության» փուլ և որի ընթացքում Նախարարների կոմիտեի դերակատարումը սահմանափակված է զուտ ստուգելով, թե արդյո՞ք պետությունը վերը նշված ժամկետում ներկայացրել է Գործողությունների ծրագիր, թե ոչ: Եթե վեց ամսվա ընթացքում Գործողությունների ծրագիրը չի ներկայացվում, կոմիտեն ուղարկում է հիշեցում,⁸ իսկ եթե դրանից երեք ամիս անց ծրագիրը կրկին չի ստացվում, կոմիտեն որոշում է ստանդարտ վերահսկողության վարույթը փոխակերպել «խստացված վերահսկողության» վարույթի⁹, որը նախատեսում է վերահսկողության առավել խիստ եղանակ:

2013 թվականի հուլիս ամսվա դրությամբ կոմիտեի վարույթում գտնվող 38 գործերից 11-ի առնչությամբ կառավարության կողմից Գործողությունների ծրագրեր չեն ներկայացվել: Դրանք էին *Վիրաքյանի* (33)¹⁰, *Անտոնյանի* (32), *Սիլվա Ասատրյանի* (15), *Վահե Գրիգորյանի* (30), *Խաչատրյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի* (37), *Խաչատրյանի* (14), *Մամիկոնյանի* (16), *Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի* (27), *Շողիխովի* (31), *Ստեփանյանի* (12) և *Սեֆիլյանի* (34) վերաբերյալ գործերը: Նշվածներից Ս. Ասատրյանի գործով Գործողության ծրագիրը ներկայացնելու 6-ամսյա ժամկետը սպառվել էր 09.11.2010թ.-ին, Խաչատրյանի գործով՝ 01.09.2010թ.-ին, Մամիկոնյանի գործով՝ 04.04.2011թ.-ին և Ստեփանյանի գործով՝ 27.07.2010թ.-ին: Այսինքն՝ նշված գործերով Գործողությունների ծրագրի տրամադրումը կառավարության կողմից ուշացվել է **երկուսից երեք տարի ժամկետով** և ներկայումս այս ժամկետը դեռևս հոսում է: Ուշադրության է արժանի այն փաստը, որ նշված ժամկետներին հաջորդած

⁷ Տե՛ս Նախարարների կոմիտեի 06/09/2010թ. թիվ CM/Inf/DH(2010)37 փաստաթուղթը, կետ 12:

⁸ Տե՛ս նույն փաստաթուղթը, կետ 26:

⁹ Նույն տեղում, կետ 27:

¹⁰ Նիշը ցույց է տալիս գործերի ցուցակում տվյալ գործի համարը:

բոլոր այն նիստերում, որտեղ Կոմիտեի օրակարգերում ընդգրկված են եղել նշված գործերը, Կոմիտեն որևէ գործուն առաջարկ չի կատարել Գործողությունների ծրագրերի ուշացման կապակցությամբ: Ինչ վերաբերում է մնացած գործերին, ապա Վիրաբյանի և Անտոնյանի գործերով նշված ժամկետը լրացել է 02.07.2013թ.-ին, Վահե Գրիգորյանի գործով՝ 17.06.2013թ.-ին, Պողոսյան/Բաղդասարյանի գործով՝ 12.03.2013թ.-ին, Շուրիխովի գործով՝ 30.04.2013թ.-ին և Սեֆիլյանի գործով՝ 02.07.2013թ.-ին: Այսինքն, նշված գործերով Գործողությունների ծրագրի տրամադրումը ուշացվել է **մեկից չորս ամսով:** *Խաչատրյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի* գործով ծրագիրը ներկայացնելու ժամկետը դեռ վրա չի հասել:

Վերը նշված 11 գործերից զատ մնացած 27 գործերով Գործողությունների ծրագիրը ներկայացվել է և այդ ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:

Անհրաժեշտ է նշել, որ նշված 11 գործերից 10-ը առանցքային (LEAD) գործեր են, այսինքն՝ այնպիսի դատական վճիռներ են, որոնցում ՄԻԵԴ-ը նկատել է համակարգային խնդիրներ ներպետական օրենսդրության և/կամ դատական պրակտիկայի հետ կապված և այդ առումով կայացրել է պիլոտային վճիռներ: Նման գործերով վճիռների կատարումը, հետևաբար, առավել օպերատիվություն և ուշադրություն է պահանջում, մինչդեռ տվյալ դեպքում նկատելի է անգործություն: Անհասկանալի է նաև Կոմիտեի մոտեցումը այն առումով, որ նշված 10 վճիռներից միայն մեկն է քննվում խստացված ընթացակարգի ներքո (Վիրաբյանի գործով վճիռը), իսկ մնացածը քննվում են ստանդարտ ընթացակարգի ներքո: Սա հակասում է Կոմիտեի երկուդի համակարգի սկզբունքներին, համաձայն որի, եթե պետության կողմից վճիռն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում Գործողությունների ծրագիրը չի ներկայացվում և Զարտուղարության կողմից առաջին հիշեցումից հետո երեք ամսվա ժամկետում կրկին ծրագիրը չի ներկայացվում, այդ հանգամանքները հիմք են ստանդարտ ընթացակարգից խստացված ընթացակարգի անցնելու համար: Տվյալ դեպքում առնվազն չորս գործերով Գործողությունների ծրագիրը չի ներկայացվել երկուսից երեք տարի և այդ ժամկետը դեռ շարունակվում է, մինչդեռ Կոմիտեն շարունակում է գործերը քննել ստանդարտ ընթացակարգով:

3. Գործողությունների զեկույցի տրամադրումը

Ինչպես արդեն նշվեց, «Գործողությունների զեկույցը» նոր հասկացություն է և այս ընթացակարգը սկսել է կիրառվել 2011 թվականի հունվարից: Այդ պահից ի վեր, ՀՀ կառավարությունը ներկայացրել է Գործողությունների զեկույցներ յոթ գործերով (Կիրակոսյանի, Մխիթարյանի, Թադևոսյանի գործերով (վարչական կալանք), Մինասյան/Սեմիրջյանի, Հովհաննիսյան/Շիրոյանի, Երանոսյանի գործերով (փոխհատուցում գույքի օտարման դիմաց) և Աշոտ Հարությունյանի գործով (բժշկական խնամք և բուժում կալանքի տակ): Նշված գործերով կառավարությունը տեղեկացրել է կիրառված ընդհանուր և անհատական բնույթի գործողությունների մասին և եզրահանգել, որ բոլոր անհրաժեշտ գործողությունները վճռի կատարման ուղղությամբ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սպառվել են և, այդպիսով, առաջարկել է փակել կատարողական վարույթները: Կոմիտեն դեռ որոշումներ չի կայացրել նշված գործերով:

4. Այլ տեղեկությունների տրամադրումը

Մի շարք գործերով Կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարությունից արդեն մի քանի տարի շարունակ սպասում է տեղեկություններ և որևէ բացատրություն չի ներկայացվել ՀՀ կառավարության կողմից, թե ինչու այդ տեղեկությունները չեն տրամադրվում: Այսպես.

- Վարչական կալանքի առաջին խմբի¹¹ գործերով (Կիրակոսյան (4), Թադևոսյան (5), Կարապետյան (13), Մխիթարյան (6) և Գալստյան (1)) Կոմիտեն 2010 թվականից ի վեր ՀՀ կառավարությունից սպասում է տեղեկատվություն 2004 թվականից Նախագահի հրամանագրի հիման վրա սկսված ՁԴՎ-ների վերանորոգման լայնամասշտաբ պետական ծրագրի արդյունքների մասին՝ հատկապես Արմավիրի և Էջմիածնի ՁԴՎ-ների մասով, քանի որ հենց այս հիմնարկներում էին

¹¹ Անվանումը պայմանական է: Այս խմբի գործերում հիմնական խախտումը, որ արձանագրվել էր ՄԻԵԴ-ի կողմից, կալանքի պայմաններն էին և դրանց դեմ բողոքարկելու իրավական պաշտպանության արդյունավետ կառուցակարգի բացակայությունը: Արձանագրվել էին նաև դատավարական իրավունքների խախտումներ և դատապարտման դեմ բողոքարկելու իրավունքի խախտում:

վերը նշված գործերով իրավախախտման զոհերը պահվել վարչական կալանքի տակ: Ի հավելումն, Կոմիտեն սպասում է նաև տեղեկատվության այն մասին, թե կալանքի պայմանների դեմ իրավական պաշտպանության ինչ մեխանիզմներ կան: Եվ վերջապես, Կոմիտեն սպասում է տեղեկատվության, թե արդյո՞ք վերը նշված անձինք շարունակում են մնալ անազատության մեջ կամ թե արդյո՞ք նրանց դատվածության մասին տվյալները շարունակում են պահպանվել: Նշված տեղեկությունները մինչ այժմ չեն տրամադրվել:

- Դեռ նախկին զեկույցում նշել էինք, որ Կոմիտեն հրավիրել էր 33 կառավարությանը նշված տեղեկությունները նշված գործերով, այդ թվում նաև Գալստյանի (1) գործով, ներկայացնել դեռ 2010թ. դեկտեմբերի թիվ 1100 նիստում, սակայն այդ տեղեկությունները նշված նիստում չէին ներկայացվել և Կոմիտեն որոշել էր հարցը տեղափոխել 2011թ. մարտի գարնանային նստաշրջան, սակայն այս նիստում նույնպես տեղեկությունները չէին ներկայացվել: 2010թ. դեկտեմբերի նիստում Կոմիտեն հայտարարել էր, որ Գալստյանի և նմանատիպ հինգ այլ վարչական կալանքի գործերով (վերը նշված չորս գործերը ներառյալ) կատարողական վարույթի սկսվելուց ի վեր Զայաստանի Զանրապետության կառավարությունը որևէ տեղեկատվություն չէր տրամադրել:
- Վարչական կալանքի երկրորդ խմբի գործերով¹² (Ամիրյան (7), Աշուրյան (3), Գասպարյանի գործով առաջին (9) և երկրորդ վճիռները (10) և Սափեյան (8)) Կոմիտեն 2010 թվականից սպասում է տեղեկատվության հանրահավաքների և միավորումների ազատության մասին օրենսդրության մեջ 2008 թվականից հետո կատարված բարեփոխումների մասին և թե արդյո՞ք դիմումատուների նկատմամբ շարունակվում են հետապնդումները: Այս տեղեկությունները դեռ չեն տրամադրվել:
- Աշոտ Զարությունյանի գործով կառավարությունը 2013թ. հուլիսին ներկայացրել է Գործողությունների զեկույց, որում ներկայացրել է տեղեկատվություն կալանքի պայմանների դեմ բողոքարկման իրավական պաշտպանության մեխանիզմների մասին, որը նախկինում պահանջվել էր Կոմիտեի կողմից: Այդուհանդերձ, Կոմիտեն պահանջել էր նաև տեղեկատվություն դատարանի դահլիճներում երկաթե ճաղավանդակների կիրառման պրակտիկայի վերաբերյալ,¹³ որի մասին

¹² Այս խմբի գործերում հիմնականում արձանագրվել է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում՝ խաղաղ հավաքների իրավունք:

¹³ Աշոտ Զարությունյանի գործով վճռում ՄԻԵԴ-ը սահմանել էր, որ ամբաստանյալին դատարանի դահլիճում երկաթե ճաղավանդակի մեջ պահելը հավասարագոր էր նվաստացուցիչ վերաբերմունքի՝ հաշվի առնելով, որ ճաղավանդակի մեջ պահելու անհրաժեշտություն տվյալ գործի հանգամանքների ներքո չի եղել:

Գործողությունների զեկույցում ոչինչ չի նշվել:

- Սարուխանյանի գործով Եվրոպական դատարանը գտել էր, որ ընտրաթեկնածուի գրանցումը անվավեր ճանաչելը ԿԸՀ-ի կողմից հանգեցրել էր դիմումատուի ընտրական իրավունքի խախտմանը: Գրանցումն անվավեր էր ճանաչվել այն հիմքով, որ թեկնածուն դիմումի մեջ չէր նշել ծնողների բնակարանի համասեփականատեր լինելու մասին փաստը: Եվրոպական դատարանը գտել էր, որ տվյալ ժամանակաշրջանում բնակարանների սեփականաշնորհման իրավական նորմերը և պրակտիկան խիստ հակասական էին, որն էլ մոլորության մեջ էր գցել թեկնածուին անշարժ գույքի մասին իր դիմումում նշելու, կամ չնշելու հարցում: Բոլոր դեպքերում, Եվրոպական դատարանը գտել էր, որ ընտրաթեկնածուների գրանցման և՛ կարգավորող նորմերը, և պրակտիկան չունեին անհրաժեշտ հստակություն: Այս առումով կատարողական վարույթում Կոմիտեն մեծ ուշադրություն է հրավիրել ընդհանուր բնույթի տեղեկությունների վրա և դեռ 2010թ. դեկտեմբերի 1100-րդ նիստում հրավիրել էր Հայաստանի կառավարությանը ներկայացնել իր դիրքորոշումը, թե արդյո՞ք անհրաժեշտություն կար հստակեցնելու ընտրաթեկնածուների սեփականության գրանցման ընթացակարգերը: Կոմիտեն խնդրել էր նույն նիստում ներկայացնել նաև պարզաբանում, թե արդյո՞ք գոյություն ունի թեկնածուների գրանցման վեճերի հետ կապված առաջին ատյանի դատարանների որոշումների վիճարկման արդյունավետ իրավական պաշտպանության միջոց՝ հաշվի առնելով տվյալ գործով դատական ստուգման ընթացքում առաջին ատյանի դատարանի, ինչպես նաև Եվրոպական դատարանի վարույթում ՀՀ կառավարության կողմից արտահայտված հակասական դիրքորոշումները: Նշված տեղեկությունները ՀՀ կառավարության կողմից 2013թ. հուլիսի դրությամբ դեռ չէին տրամադրվել, մինչդեռ ընտրական օրենսգիրքը խնդրո առարկա ժամանակահատվածից առ այսօր բազմիցս ենթարկվել է փոփոխության՝ այդ թվում նաև ընտրաթեկնածուների գրանցման կարգը:

5. Անհատական բնույթի միջոցներ

5.1. Գործերի վերաբացում

Մեր ունեցած տվյալների համաձայն, մինչ այժմ հարուցվել են գործերի վերաբացման յոթ վարույթներ, որոնցից չորսի վերաբերյալ Կոմիտեն հայտարարել է վճռի կատարման վարույթի ավարտի մասին (դրանք են *Միշա Հարությունյանի, Պայթար և Հաղթանակ ՍՊԸ-ի, Նիկողոսյանն ու Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի, Մելտեքս ՍՊԸ-ի* գործերը), իսկ երեք գործերով վճռի կատարման վարույթները Կոմիտեում դեռ ընթացքի մեջ են:

Ավարտված չորս գործերով վերաբացման վարույթների մասին մեր գնահատականը մանրամասնորեն ներկայացված է ստորև շարադրված «Ավարտված վարույթներ» բաժնում: Այդ բաժնում մենք ներկայացրել ենք մեր դրական գնահատականը երեք գործերի առումով և մեր բացասական գնահատականը մեկ գործի՝ Մելտեքս ՍՊԸ-ի գործի կապակցությամբ՝ վերջինս այն հիմնավորմամբ, որ այդ գործով Կոմիտեն հայտարարել էր վճռի կատարման վարույթի ավարտման մասին, առանց հաշվի առնելու ներպետական մակարդակում՝ ՀՀ Սահմանադրական դատարանում գործի վերաբացման վարույթի ընթացքի մեջ գտնվելու փաստը:¹⁴

Կոմիտեում ընթացքի մեջ գտնվող երեք վարույթներից մեկով ներպետական մակարդակում ավարտվել է գործի վերաբացման վարույթը, իսկ երկու գործերով վերաբացման վարույթները դեռ ընթացքի մեջ են: Վերաբացման վարույթն ավարտվել է Մաքսիմ Գասպարյանի երկրորդ գործով վճռի մասով (գանգատ թիվ 22571/05): Այս գործի վերաբացման վարույթի ընթացքը ներպետական մակարդակում հետաքրքրական էր այնքանով, որ սկզբում դատարանները չէին կողմնորոշվում, թե որ դատարանը պետք է իրականացնեք վերաքննություն՝ վարչական, թե քրեական դատարանը: Գործի փաստերը վերաբերում էին վարչական կալանքին և դատական քննության ընթացքում մի շարք դատավարական խախտումների, մասնավորապես՝ իր դեմ ցուցմունք տված ոստիկաններին դատարանում հարցաքննելու անհնարինությունը: Եվրոպական դատարանը 6-րդ հոդվածի հիմքով գործը քննել էր որպես քրեական գործ և, հետևաբար, արձանագրել է քրեադատավարական սկզբունքների խախտում (հակընդդեմ հարցման իրավունքի խախտում, պաշտպանի իրավունքի խախտում և այլն): Վերաբացման վարույթում Վերաքննիչ քրեական դատարանը կայացրել էր գործը վերաբացելու մասին որոշում և գործն ուղարկել էր Երևանի քաղաքի Շենգավիթի վարչական շրջանի ընդհանուր իրավասության

¹⁴ Տե՛ս ավելի մանրամասն «Ավարտված վարույթներ» բաժնում:

դատարան նոր հանգամանքի հիմքով քննություն կատարելու համար, սակայն վերջինս որոշել էր, որ գործը ներառում է վարչաիրավական բնույթի հարց և գործն ուղարկել էր Վարչական դատարան: Վերջինս գտել էր, Եվրոպական դատարանը արձանագրել էր քրեադատավարական սկզբունքների խախտում և որ հարցի լուծումը հնարավոր էր միայն քրեական դատավարության ընթացակարգով, հետևաբար այն ենթակա էր վերադարձման Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան: Ի վերջո, Շենգավիթ վարչական շրջանի դատարանը կատարել գործի վերաքննություն, սակայն դա որոշեց անել վարչական դատավարության կարգով: Նման պայմաններում դատախազը հրաժարվեց մասնակցել նիստին՝ պատճառաբանելով, որ դատաքննությունը վարչական դատավարության կարգով անցկացնելու պայմաններում դատախազի մասնակցությունը չի համապատասխանում Սահմանադրության 103-րդ հոդվածով սահմանված իր լիազորություններին: Գործի վերաքննության արդյունքում դատարանը որոշեց, որ «*վարչական իրավախախտման վերաբերյալ գործում չկա որևէ ապացույց, որով կհաստատվեր Մաքսիմ Գասպարյանի կողմից վարչական իրավախախտման առկայությունը: Ինչ վերաբերում է ոստիկանության բաժնի 2 աշխատակիցների զեկուցագրերին, ապա նույնիսկ այդ զեկուցագրերից պարզ չէ, թե Մաքսիմ Գասպարյանը կոնկրետ ինչ իրավախախտում է թույլ տվել, երբ է կատարել ենթադրյալ իրավախախտումը... Այսպիսով, դատարանը եզրակացնում է, որ Մաքսիմ Գասպարյան 2004թ. մայիսի 20-ին պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ որևէ իրավախախտում, դիտավորյալ գործողություն կամ անգործություն չի կատարել...»:¹⁵*

Նշված եզրահանգման հիման վրա դատարանը որոշեց կարճել գործի վարույթը: Այս դատական ակտը գուցե միակ դատական ակտն է, որտեղ Եվրոպական դատարանի որոշման հիման վրա նոր հանգամանքի հիմքով գործի վերաքննման արդյունքում դատարանը կայացրեց մեղադրյալի համար բարենպաստ դատական ակտ: Թեև դատարանը չկայացրեց արդարացման որոշում, քանի որ գործը քննում էր վարչական դատավարության կարգով (թեև Մաքսիմ Գասպարյանը միջնորդել էր, որպեսզի գործը քննվեր քրեական դատավարության կարգով), այդուհանդերձ, համեմատած վերաբացված վարույթների արդյունքում կայացված մյուս դատական ակտերի հետ (վերը նշված չորս ավարտված վարույթներով գործերը), այս դատական ակտով ոչ թե մեղադրանքը թողնվեց նույնը, այլ մեղադրանքն ընդհանրապես հանվեց և անձը փաստորեն արդարացվեց՝ թեև ձևական իմաստով

¹⁵ Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի
07.04.2010թ. ԵՇԴ/0001/05/10 որոշումը:

արդարացման վերաբերյալ որոշում չի կայացվել: Հաշվի առնելով գործի վերաբացման վարույթի արդյունքները սույն գործով, գտնում ենք, որ սույն գործով անձի համար ապահովվեց իրական ու արդյունավետ *restitutio in integrum* ընթացակարգ: Այս հիմքով սույն գործով ՄԻԵԴ վճռի կատարումը գնահատում ենք դրական: Միաժամանակ փաստում ենք, որ կառավարությունը սույն գործի վերաբացման ու Շենգենյան վարչական շրջանի դատարանի որոշման մասին Կոմիտեին տեղյակ չի պահել:

Ինչ վերաբերում է մյուս երկու գործերին, ապա դրանցից առաջինը *Մուրադխանյանի* գործն է, որի շրջանակներում ներկայացվել է գործի վերաբացման դիմում Վճռաբեկ դատարան և վերջինս 2013թ. հունիսի 21-ին կայացրել է գործի վերաբացման մասին որոշում:¹⁶ Գործով դեռ վերաքննություն չի անցկացվել և դեռ պարզ չէ, թե ինչ շրջանակներում կանցկացվի վերաքննությունը: Թեև գործի վերաբացման մասին որոշումը ինքնին դրական երևույթ է, սակայն ձեռնպահ ենք մնում գնահատել դատարանի որոշման նշանակությունը վճռի կատարման նպատակով, քանի որ վերջնական գնահատական կարելի է տալ միայն վարույթի ավարտման դեպքում: Երկրորդը Արտակ Գաբրիելյանի գործն է, որի առումով վերաբացման դիմում է ներկայացվել 2013թ. հուլիսի 8-ին, սակայն Վճռաբեկ դատարանը դեռ չի արձագանքել դիմումին: Հաշվի առնելով, որ սույն գործով վարույթը նույնպես դեռ չի ավարտվել, ձեռնպահ ենք մնում գնահատական տալ վարույթի նշանակության մասին:

5.2. Փոխհատուցման գումարների վճարումը

Փոխհատուցման գումարների վճարումը, որպես կանոն, կատարվում է սահմանված ժամկետների մեջ՝ վճռի ուժի մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում: Մեզ հայտնի է միայն մեկ դեպք, երբ սահմանված գումարը վճռի ուժի մեջ մտնելուց հետո դեռ տևական ժամանակ չի վճարվել և շարունակում է մնալ չվճարված: *Թունյանն ու այլք ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը կայացվել է 2012թ. հոկտեմբերի 9-ին և ուժի մեջ մտել 2013թ. մայիսի 11-ին, սակայն մոնիթորինգն իրականացնելու ընթացքում՝ 2013 թվականի օգոստոսի 15-ի դրությամբ փոխհատուցման վճարը, որը կազմում էր 30,000 եվրո նյութական վնասի, 1,500-ական եվրո յուրաքանչյուր չորս դիմումատուներին ոչ նյութական վնասի և 30 եվրո դատական ծախսերի դիմաց, դեռ չէին վճարվել: Վճարման ուշացման փաստի մասին դիմումատուների փաստաթղթերը՝ Վահե Գրիգորյանը հայտնել է Կոմիտեին 30.05.2013 նամակով:¹⁷

¹⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 21/06/2013թ. ՎԲ-01/13 որոշումը:

¹⁷ Հավելված 10:

6. Ընդհանուր բնույթի միջոցներ

6.1. Օրենսդրական փոփոխություններ և ներպետական պրակտիկա

6.1.1. Վարչական կալանք

Վարչական կալանքի ենթարկված անձանց գործերով դեռ մինչև դրանց կատարողական վարույթների սկիզբը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լայն փոփոխություններ են կատարվել: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքից հանվել են որպես վարչական տույժի տեսակ ազատությունից զրկում նախատեսող բոլոր դրույթները: Ընդհանրապես, վարչական կալանք հասկացությունը լիովին վերացվեց օրենսդրական պրակտիկայից, որը սկիզբ առավ 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից, ըստ որի սահմանվեց անձին պատժելու նպատակով ազատությունից զրկելու միայն երկու հիմք՝ հանցագործության կատարման հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելը կամ կալանավորելը և հանցագործության կատարման համար դատապարտված անձի ազատազրկումը: Այսինքն, նոր Սահմանադրությունը բացառեց վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքով անձի ազատազրկումը:¹⁸

6.1.2. Խոշտանգմամբ ստացված ապացույցի օգտագործում

Այս հարցը բարձրացավ Միշա Չարությունյանի գործով հայտնի վճռից հետո: Սույն գործի կապակցությամբ օրենսդրական որևէ փոփոխություն չի կատարվել, քանի որ դրա կարիքը բացակայում էր: Խոշտանգմամբ ստացված ապացույցի օգտագործումը հստակորեն արգելված էր Զրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով դեռ մինչև ՄԻԵԴ-ի կողմից հայտնի վճռի կայացումը: Այդուհանդերձ, ի հավելումս օրենսդրական դրույթի, ՀՀ վճռաբեկ դատարանը 2010 թվականից սկսեց զարգացնել ինք-

¹⁸ Տե՛ս, այս իմաստով, Գալստյանի, Կիրակոսյանի, Մխիթարյանի, Կարապետյանի, Թադևոսյանի, Սափեյանի, Ամիրյանի, Աշուղյանի և Գասպարյան (1) և Գասպարյան (2) ի գործերով վճիռները և դրանց համապատասխան վարույթները Կոմիտեում: Այս իմաստով տե՛ս նաև 2010 թվականի մոնիթորինգի արդյունքները:

Նուրույն նախադեպային իրավունք խոշտանգմամբ ստացված ապացույցի անթույլատրելիության մասին՝ ներդնելով «թունավոր ծառի պտուղներ» սկզբունքը, որով սահմանվեց, որ անթույլատրելի է ոչ միայն էական խախտումով (տվյալ դեպքում խոշտանգմամբ) ձեռք բերված ապացույցը, այլ նաև դրանից բխող ածանցյալ ապացույցը և դրանց երկուսի տակ ընկած փաստական տվյալները:¹⁹ Ի հավելումս, սահմանվեցին նաև հավելյալ երաշխիքներ, օրինակ, մեղադրյալի կողմից խոշտանգման մասին դատարանում հնչեցրած հայտարարության դեպքում դատարանի կողմից դատախազին քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմելու պարտականության, խոշտանգման փաստի հայտնաբերումից հետո բժշկական քննության անցկացման ձգձգման անթույլատրելիության և ծառայողական քննությունը որպես խոշտանգման մասին հայտարարության ոչ պատշաճ արձագանք հանդիսանալու մասին:²⁰ Ընդունվեցին նաև նոր նախադեպեր ապացույցների ընդունելիության, վերաբերելիության, արժանահավատության և բավարար համակցության հասկացությունների պրակտիկ կիրառության մասին, որոնց հիմքում ընկած փաստերը թեև չէին վերաբերում խոշտանգմանը, սակայն իրավունքի մասին նախադեպային սահմանումները լիովին կիրառելի են նաև խոշտանգումների փաստերի նկատմամբ:²¹ Ներկայումս Միշա Յարոլայնյանի գործով սահմանված այն նախադեպային դրույթը, համաձայն որի խոշտանգումով ստացված ապացույցը չի կարող մնալ ապացույցների զանգվածում նույնիսկ դրա ապացուցողական նվազ նշանակության դեպքում, լայնորեն ճանաչված սկզբունք է իրավակիրառ պրակտիկայում:

6. 1.3. Դատական նիստի ծանուցում

Նիկողոսյանն ու Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի հիման վրա օրենսդրական որևէ փոփոխություն չի կատարվել, սակայն այդ վճիռը հիմնովին փոխեց դատական նիստերի մասին ծանուցելու ներպետական պրակտիկան: Եթե նախկինում ըստ ձևավորված պրակտիկայի դատարանի կողմից ծանուցագրի հանձնումը փոստային բաժանմունքին ինքնին համարվում էր պատշաճ ծանուցում (առանց համոզվելու, թե արդյոք դատավարության մասնակիցը ստացել է ծանուցումը), ապա վերը նշված վճռից

¹⁹ Արայիկ Գգոյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010թ. փետրվարի 12-ի ԵԱԲԴ/0049/01/09 որոշումը:

²⁰ Արայիկ Գգոյանի գործով վճիռը, § 25-29:

²¹ Օրինակ, Արմեն Սարգսյանի, Համայակ Սահակյանի, Մակար Յովհաննիսյանի, Սիրակ Սաքանյանի գործերով Վճռաբեկ դատարանի որոշումները:

հետո կարգը էապես փոփոխվեց և դատարաններից պահանջվեց դատական նիստը սկսել միայն հետադարձ ծանուցման անդորրագրի ստացումից հետո: Այս կարգը էապես բարձրացրեց դատավարության մասնակիցների դատարանի մատչելիության իրավունքի երաշխիքը:

6.1.4. Այլընտրանքային գինվորական ծառայություն

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ն որոշել էր, որ այնպիսի պայմաններում, երբ կրոնական համոզմունքներից ելնելով գինվորական ծառայությունից հրաժարվող մարդկանց համար ներպետական իրավական համակարգը այլընտրանքային գինվորական ծառայության հնարավորություն չէր տալիս, այլ սահմանում էր միայն քրեական պատասխանատվություն, խախտվում էր անձի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, քանի որ առանց այլընտրանքի հնարավորություն տալու անձին քրեական հետապնդելն ու դատապարտելը իրավունքի այնպիսի միջամտություն էր, որն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում: Տվյալ դեպքում փաստերը վերաբերում էին մինչև 2004 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածին, երբ մի կողմից Այլընտրանքային գինվորական ծառայության մասին օրենքը դեռ ուժի մեջ չէր մտել, իսկ մյուս կողմից Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել էր մինչ օրենքի ընդունումը քրեական հետապնդման չենթարկել կրոնական համոզմունքներից ելնելով գինվորական ծառայությունից հրաժարվող մարդկանց: Այսինքն, վճիռը վերաբերում էր միայն պարտադիր գինվորական ծառայությունից հրաժարվելու փաստերին և վճռով իրավական դիրքորոշում չէր արտահայտվել 2004 թվականի հուլիսին ուժի մեջ մտած «Այլընտրանքային գինվորական ծառայության մասին» օրենքի վերաբերյալ: Այդուհանդերձ, ի տարբերություն Եվրոպական դատարանի, ԵԽ քաղաքական մարմինները ՀՀ իշխանություններից բազմիցս պահանջել են ընդունել «*Եվրոպական չափանիշներին համապատասխան այլընտրանքային ծառայություն*», որը կրոնական համոզմունքներից ելնելով գինվորական ծառայությունից հրաժարվող մարդկանց համար «*կապահովի հստակորեն արտահայտված քաղաքացիական բնույթի իսկական այլընտրանքային ծառայություն, որը չպետք է լինի ոչ կանխարգելիչ, և ոչ էլ պատժող բնույթի*»:²² Դա է պատճառը, որ Բայաթյանի գործով վճռի

²² ԵԽԽՎ 2007թ. թիվ 1532 Բանաձևը «Հայաստանի ստանձնած պարտավորությունների և հանձնառությունների կատարման վերաբարյալ»: Տե՛ս նաև ԵԽԽՎ 2009թ. թիվ 1609 Բանաձևը, § 16.4, ինչպես նաև Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համերբերգի զեկույցը, CommDH(2011)12 փաստաթուղթը, § 122 և 156-

կատարման վարույթում ընդհանուր բնույթի միջոցների շարքում ՀՀ-ն պարտավորվել է այլընտրանքային գինվորական ծառայությունը փոխարինել այլընտրանքային քաղաքացիական բնույթի ծառայությամբ և այդ նպատակով արդեն կատարել է գործուն քայլեր: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովը 02.05.2013թ. ընդունել է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք, որն ուժի մեջ է մտել 2013թ. հունիսի 8-ից: Ըստ այս օրենքի, նախատեսվում է սահմանել առանձին այլընտրանքային գինվորական և այլընտրանքային աշխատանքային ծառայություններ (հոդվ. 3): Այլընտրանքային գինվորական ծառայության կարող է անցնել այն անձը, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են **միայն զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը**, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է **ընդհանրապես գինվորական ծառայություն անցնելը**: Այլընտրանքային **գինվորական** ծառայության իրականացումը կազմակերպում և վերահսկում է պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, իսկ այլընտրանքային **աշխատանքային** ծառայության իրականացումը կազմակերպում և վերահսկում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման հատուկ մարմինը (հոդվ. 14): Այլընտրանքային ծառայության անցնելու մասին դիմումի վերաբերյալ որոշումը կայացվում է Հանրապետական հանձնաժողովը, որը կազմված է տարածքային կառավարման, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, ոստիկանության և պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների, ինչպես նաև կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներից (հոդվ. 3): Այլընտրանքային գինվորական ծառայության ժամկետը կրճատվել է 36 ամսից մինչև 30 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը՝ 42 ամսից մինչև 36 ամիս:

Անցումային դրույթներում առկա է 24-րդ հոդվածը, որի 3-րդ մասը ունի հետևյալ բովանդակությունը. «3. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերով նախատես-

158, որում Հանձնակատարը նշում է, որ 2011 թվականի դրությամբ Այլընտրանքային գինվորական ծառայության մասին օրենքը իր բնույթով քաղաքացիական չէ, քանի որ վերահսկվում է ռազմական կառույցների կողմից: Տե՛ս նաև Վենետիկի հանձնաժողովի 20.12.2011թ. թիվ 644/2011 Կարծիքը նմանատիպ եզրահանգումների մասին:

ված դեպքերում սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված՝ այլընտրանքային ծառայության ժամկետը նվազեցվում է անձի՝ քրեական պատիժ կրելու կամ քրեական հետապնդման ենթարկվելու արդյունքում անազատության մեջ գտնվելու ժամկետով»։ Այս իմաստով զուգահեռ փոփոխության է ենթարկվել վերը նշված օրենքը և դրա համապատասխանաբար 3-րդ հոդվածում ավելացվել են 12 և 13-րդ մասերը, ըստ որոնց նախատեսվում է քրեական պատասխանատվությունից ազատել և քրեական հետապնդումը դադարեցնել այն անձանց նկատմամբ, ովքեր մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ը դիմում ներկայացնեն այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ։

Գտնում ենք, որ վերը նշված փոփոխությունները կարող են ապահովել «իրական քաղաքացիական այլընտրանքային ծառայություն»՝ ինչպես նշում են ԵԽ մի շարք մարմիններ, քանի որ, առաջին, սահմանված են երկու առանձին, ինքնուրույն այլընտրանքային ծառայության տեսակներ՝ **զինվորական և քաղաքացիական**, որոնց հիմքերը, պայմանները, կարգավորող մարմինները տարբեր են և, ամենակարևորը, քաղաքացիական ծառայության կարգավորող մարմինները գտնվում են պաշտպանության նախարարության վերահսկողությունից դուրս։

Խնդրահարույց կարող է լինել միայն անցումային 24-րդ հոդվածի 3-րդ մասը։ Եթե անազատության մեջ գտնվող դատապարտյալը դիմի այլընտրանքային ծառայության և նրա դիմումը հաստատվի, ապա անձը պատժի կրումից ազատվելուց հետո դեռ պետք է կատարի այլընտրանքային ծառայություն՝ այս ծառայության սահմանված ժամկետի (36 ամիս) անազատության մեջ գտնվելու ժամկետի տարբերության չափով։ Այս հանգամանքը կարող է բարձրացնել կրկնակի պատժի ենթարկվելու խնդիր, եթե այլընտրանքային ծառայության իրականացման եղանակը իր մեջ պարունակի պատժի կամ հանցագործության կանխարգելման քրեական իրավունքի էլեմենտներ։

6.1.5. Խափանման միջոց կալանք

2011-2012թթ.-ի ընթացքում Եվրոպական դատարանը մի շարք վճիռներով անդրադարձել է խափանման միջոց կալանքի խնդիրներին, որոնք բոլորը ներկայումս գտնվում են Կոմիտեի վարույթում (*Պողոսյանի, Մուրադ-խանյանի, Փիրուզյանի, Գրիգորյանի, Սեֆիյանի, Ասատրյանի և Մալխասյանի* գործերով վճիռները)։ Այս գործերով առանցքային են *Պողոսյանի* և *Գրիգորյանի* գործերով վճիռները։

Պողոսյանի գործով խնդրո առարկա հարցերն էին, առաջին, խափան-

ման միջոց կալանքի ժամկետի երկարաձգումը ոչ թե դատարանի որոշման հիման վրա, այլ ինքնաբերաբար՝ այն փաստի ուժով, որ քրեական գործը արդեն մուտք էր եղել դատարան, երկրորդ, նախաքննության փուլում կալանքի ժամկետի երկարաձգման մասին դատական որոշումը բողոքարկելու անհնարինությունը զուտ այն հիմքով, որ քրեական գործը արդեն մուտք էր եղել դատարան, և, երրորդ, դատավորի մոտ տարված լինելու իրավունքի խախտումը այն հիմքով, որ եթե փախուստի մեջ գտնվող անձի նկատմամբ նրա բացակայությամբ դատարանը որոշել էր նրա նկատմամբ կիրառել խափանման միջոց կալանք, հայտնաբերվելուց կամ վարույթն իրականացնող մարմնին ներկայանալուց հետո մեղադրյալը ոչ թե տարվում էր դատավորի մոտ, որպեսզի վերջինս նրա ներկայությամբ կրկին քննության առնել խափանման միջոց կալանքի հարցը, այլ տարվում էր կալանավայր՝ դատարանի նախկին որոշման հիման վրա:

Պողոսյանի գործի հիմքով ՀՀ կառավարությունը Կոմիտեին ներկայացրել է Գործողությունների ծրագիր, որում, ընդհանուր բնույթի գործողությունների շարքում, շարադրել է նախադեպային իրավունքում այն զարգացումների մասին, որոնք լուծել են վերը նշված խնդիրների մի մասը: Ավելին, կառավարությունը ներկայացրել է նաև հատվածներ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծից՝ որպես ապացույց առ այն, որ վերը նշված խնդիրների մի մասը լուծվելու են նոր օրենսգրքով, որն ուժի մեջ է մտնելու 2014 թվականի հունվարի 1-ից (տե՛ս Հավելված 7): Մասնավորապես, կառավարությունը ներկայացրել է Վարդան Մինասյանի գործով Վճռաբեկ դատարանի նախադեպը, ըստ որի սահմանվել է, որ քրեական գործը պետք է դատարան ուղարկել խափանման միջոց կալանքի ժամկետի սպառումից առնվազն 15-օր առաջ, որպեսզի քրեական գործը դատաքննության նախապատրաստելու օրենքով սահմանված 15-օրյա ժամկետում դատավորը հարկադրված չլինի անդրադառնա խափանման միջոց կալանքի երկարաձգման, փոփոխման կամ վերացման հարցին: Կառավարությունը այս առումով վկայակոչել է նաև Քրեական դատավարության նոր օրենսգրքի 208-րդ հոդվածը, որի երկրորդ մասը նույնպես սահմանում է, որ քրեական գործը պետք է դատարան ուղարկվի խափանման միջոց կալանքի ժամկետի սպառումից առնվազն 15 օր առաջ: Կառավարությունը այս կարգավորումը ներկայացնում է որպես Պողոսյանի գործով բարձրացված առաջին խնդրի լուծման արդյունավետ և վերջնական եղանակ: Քանի որ նույն համակարգային խնդրին Եվրոպական դատարանը անդրադարձել է նաև Սեֆիլյանի, Մալխասյանի և Փիրուզյանի գործերով, նշանակում է կառավարության ներկայացրած լուծումը հավասարապես վերաբերում է նաև այս գործերին:

Մենք համաձայն չենք կառավարության վերը նշված դիրքորոշման հետ: Վարդան Մինասյանի գործով սահմանված 15-օրյա իրավակարգա-

վորումը խնդրի ժամանակավոր լուծում էր՝ այնքանով, որքանով թույլ էին տալիս Վճռաբեկ դատարանի լիազորությունները որպես դատարան, այլ ոչ թե օրենսդիր մարմին: Մինչդեռ բազմիցս առաջարկվել է խնդրի հիմնական իրավակարգավորումը լուծել օրենսդրական եղանակով՝ **սահմանելով կալանքի հստակ ժամկետներ դատաքննության փուլում:** Պողոսյանի գործով Եվրոպական դատարանի որոշման հիմքում ընկած էր այն գաղափարը, որ կալանքի ցանկացած փուլում դրա ժամկետները պետք է հստակորեն իրավակարգավորված լինեն՝ պրակտիկայի կամ օրենսդրության ուժով: Դա բխում է «օրինականության» ունիվերսալ սկզբունքի բաղադրիչ հանդիսացող «իրավական որոշակիության» ընդհանուր գաղափարից, համաձայն որի օրենքը պետք է համապատասխանի որոշակի որակական պահանջների, որոնցից է իրավական որոշակիությունը: Այսինքն, օրենքը պետք է տվյալ իրավահարաբերությունը կարգավորի հստակորեն, որպեսզի կալանավորի մոտ ապահովի օրենքի կիրառության և իրավական հետևանքների կանխատեսելիություն: Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, այնպիսի հանգամանքներում, երբ կալանքի ժամկետները վարույթի ցանկացած փուլում հստակորեն օրենսդրորեն կանոնակարգված չեն և դա առաջացնում է անորոշություն կալանավորի համար առ այն, թե դեռ որքան ժամկետով պետք է շարունակվի իր կալանքը, նման հանգամանքը բարձրացնում է կալանքի օրինականության մասին հարց:²³ Հենց այս գաղափարը հաշվի առնելով սահմանվեց Վարդան Մինասյանի գործով 15-օրյա իրավակարգավորումը, որը կոչված էր ժամանակավորապես լուծելու կալանքի ժամկետի կանխատեսելիությունը **Նախաքննությունից դատաքննության անցումային փուլում՝** դատաքննության նախապատրաստության 15-օրյա ժամկետում, մինչդեռ հիմնական խնդիրը՝ դատաքննության **ողջ** փուլում կալանքի ժամկետների կարգավորումը, շարունակում է բաց մնալ առ այսօր: Ցանկացած քրեական գործում, որտեղ մեղադրյալը կալանքի տակ է, դատաքննության նախապատրաստական փուլի 15-օրյա ժամկետի ավարտով կալանավորի համար սկսվում է կալանքի ժամկետի անորոշության փուլ: Թվում էր, թե խնդիրը պետք է որ վերջնական լուծում ստանար Քրեական դատավարության նոր օրենսգրքով, սակայն ինչ-ինչ նկատառումներից ելնելով Նախագծի հեղինակները չեն ցանկացել դատաքննության փուլում կալանքի ժամկետներին իրավակարգավորում տալ:

Այսպիսով, մենք գտնում ենք, որ Վարդան Մինասյանի նախադեպով և Քրեական դատավարության նոր օրենսգրքի 208-րդ հոդվածի իրավակարգավորումով չի լուծվում դատաքննության փուլում կալանքի ժամկետների որոշակիության խնդիրը:

²³ Տե՛ս, օրինակ, *Ստաշայտիսն ընդդեմ Լիտվայի*, թիվ 47679/99, 21/03/2002, § 67: 26

Ինչ վերաբերում է Պողոսյանի գործով բարձրացված մյուս երկու խնդիրներին (առաջին, կալանքի նշանակման կամ երկարաձգման վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու անհնարինությունը վերաքննիչ դատարան՝ քրեական գործի դատարան մուտք լինելուց հետո և, երկրորդ, փախուստի մեջ գտնվող մեղադրյալին հայտնաբերելուց հետո դատավորի մոտ տանելու պարտականությունը՝ որպեսզի դատարանը կրկին քննի կալանքի մասին հարցը), ապա այս առումով համամիտ ենք կառավարության հետ, որ Վճռաբեկ դատարանի զարգացած նախադեպային իրավունքի ուժով²⁴ այս երկու խնդիրները վերջնական լուծում են գտել իրավակիրառ պրակտիկայում:

Խափանման միջոց կալանքի պրակտիկայի հետ կապված կան մի շարք այլ համակարգային խնդիրներ, որոնց թեև անդրադարձել է Եվրոպական դատարանը, սակայն Կոմիտեն և կառավարությունը դեռ չեն անդրադարձել դրանց իրենց փաստաթղթերում և կարծում ենք, որ կողմերը դրանց կանդադարման վարույթի ավելի ուշ փուլերում՝ այդ թվում կապված նաև ապագայում սպասվելիք վճիռների շրջանակներում: Այդպիսի խնդիրներից են, օրինակ, կալանքի ժամկետների երկարաձգումը այնպիսի հիմնավորումներով, ինչպիսին են «կատարվելիք քննչական գործողությունները» և «քրեական գործի ընթացքի մեջ գտնվելը»,²⁵ որոնք, հատկապես առաջինը, դեռ տարածված պրակտիկա է իրավակիրառողների մոտ: Ավելին, Եվրոպական դատարանը գրեթե բոլոր գործերով անդրադարձել է խափանման միջոց կալանքի նշանակման կամ երկարաձգման հարցում հիմնավոր կասկածի մասին հարցին՝ սահմանելով այդ հարցի իրավակարգավորումը Կոնվենցիայի հիմքով: Այս իմաստով խնդրահարույց է Քրեական դատավարության Նոր օրենսգրքով առաջարկվող իրավակարգավորումը, համաձայն որի ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների մեջ մեղադրվող անձի նկատմամբ կալանք նշանակելիս դատավորը կարող է բավարարվել միայն հիմնավոր կասկածի առկայությամբ և պարտավոր չէ քննության առարկա դարձնել կալանքի ավանդական հիմքերը՝ փախուստի դիմելու, Նոր հանցագործություն կատարելու և քննությանը խոչընդոտելու հնարավորությունները (հոդվ. 116): Նման մոտեցումը կարող է հակասել Կոնվենցիայի պահանջներին, ըստ որի կալանքի պայմաններն ու հիմքերը միշտ, վարույթի բոլոր փուլերում պետք է քննության առարկա հանդիսանան դատավորի կողմից:

Կան նաև Եվրոպական դատարանի կողմից բարձրացված խնդիրներ, որոնք թեև օրենսդրական կամ նախադեպային իրավունքով հստակորեն

²⁴ Տիգրան Վահրադյանի գործով Վճռաբեկ դատարանի 26.12.2009թ. ԼՂ/0197/06/08 որոշումը և Անուշ Ղավալյանի գործով Վճռաբեկ դատարանի 28.11.2008թ. ԵԲՐ/0299/01/08 որոշումը:

²⁵ Եվրոպական դատարանը անդրադարձել է այս խնդիրներին Փիրուզյանի գործով:

լուծում չեն ստացել, սակայն պրակտիկայում մեծամասամբ հետևողականորեն կիրառվում է Եվրոպական դատարանի մոտեցումները: Օրինակ, *Փիրուզյանի* գործով կալանքի ժամկետի երկարաձգման դատական վարույթում դատավորը հրաժարվել էր քննել հիմնավոր կասկածի մասին հարցը՝ նշելով, որ այդ հարցը դատական ստուգման առարկա չէ: Եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, եզրահանգելով, որ հիմնավոր կասկածի մասին հարցի բացառմամբ դատարանը դատական ստուգման շրջանակները նեղացրել է այնչափ, որ 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված երաշխիքը զրկվել էր իր իմաստից:²⁶ Ներկա դատական պրակտիկայում դատարանները հետևողականորեն քննության առարկա են դարձնում հիմնավոր կասկածի մասին հարցը վարույթի ցանկացած փուլում՝ իրենց նախաձեռնությամբ կամ կողմի փաստարկների ներքո: Երկրորդ խնդիրը, որը նույնպես լուծվել է պրակտիկայի ուժով, քրեական գործի նյութերը պաշտպանական կողմին չտրամադրելու խնդիրն է վերաբերում: Փիրուզյանի գործով Եվրոպական դատարանը կրկին արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում այն հիմքով, որ դատավորը քննիչից պահանջել ու ստացել էր քրեական գործի նյութերը, սակայն դրանք չէր տրամադրել պաշտպանական կողմին: Դատարանը սահմանել էր դատական ստուգման վարույթի մրցակցային պայմանի խախտում:²⁷ Ներկայումս տարածված պրակտիկայի համաձայն, դատարանները քրեական գործի նյութերը իրենց որոշումների մեջ չեն վկայում, եթե այդ նյութերը, ելնելով քննության գաղտնիությունից, չեն տրամադրվել պաշտպանական կողմին: Թեև կառավարությունը այս երկու երևույթները իր փաստաթղթերում չի հիշատակում, սակայն կարծում ենք, որ վարույթի հետագա փուլերում, կամ այլ գործերով, Կոմիտեն դրանց կանդաղառնա և այս իմաստով կարծում ենք, որ դրանք նույնպես պետք է գնահատականի արժանանան:

6.1.6. Բարոյական վնասի դիմաց նյութական փոխհատուցում

Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է խախտում այն հիմքով, որ ներպետական օրենսդրությունը հնարավորություն չի տալիս քաղաքացիներին ստանալ բարոյական վնասի դիմաց նյութական փոխհատուցում անօրինական ազատազրկման կամ արգելված վերաբերմունքի համար: Նմանատիպ որոշում կայացվեց Նաև

²⁶ Տե՛ս Փիրուզյանի գործով վճիռը, § 121:

²⁷ Տե՛ս Փիրուզյանի գործով վճիռը, § 118:

խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով՝ այս անգամ անօրինական ճանաչված խափանման միջոց կալանքի առումով: Այս երկու գործերով ՄԻԵԴ-ն արձանագրել է Կոնվենցիայի 13-րդ և 5-րդ հոդվածների խախտումներ պետական իրավական պաշտպանության միջոցի բացակայության հիմքով: Առաջին վճռի ընդունումից անցել է արդեն ավելի քան մեկ տարի, իսկ սեպտեմբերին կլրանա վճռի ուժի մեջ մտնելու մեկ տարին, սակայն իշխանությունները դեռ ոչ մի գործուն քայլ չեն կատարել օրենսդրության մեջ այդ բացը լրացնելու կապակցությամբ: Դատարանները շարունակում են մերժել անօրինական կալանավորման դիմաց բարոյական վնասի հիմքով նյութական փոխհատուցման պահանջները՝ վկայակոչելով նման փոխհատուցում չնորհելու օրենսդրական հիմքերի բացակայությունը:

6.1.7. Սեփականության օտարում

Սեփականության օտարման հարցին Եվրոպական դատարանը անդրադարձել է Զյուսիսային պողոտայի մի շարք վճիռներով (*Մինասյանը և Սեմիրջյանն ընդդեմ Հայաստանի, Հովհաննիսյանը և Շիրոյանը ընդդեմ Հայաստանի, Երանոսյանը և այլոք ընդդեմ Հայաստանի, Թունյանը և այլոք ընդդեմ Հայաստանի, Դանիելյանը և այլոք ընդդեմ Հայաստանի*): Խնդրո առարկա հարցը նշված գործերում կայանում էր նրանում, առաջին, որ քաղաքացիների գույքի օտարումը պետական կարիքների համար կատարվել էր օրենքի բացակայությամբ՝ կառավարության որոշումների հիման վրա, երկրորդ, որ համարժեք փոխհատուցում չէր տրվել: Առաջինը բարձրացնում է համակարգային բնույթի խնդիր, իսկ երկրորդը՝ կամայականության:

Առաջին խնդրի մասով կառավարությունը իր ներկայացրած Գործողությունների ծրագրում²⁸ վկայակոչում է 2006թ. Սահմանադրական դատարանի ՍԴՈ-630 որոշումը և այդ որոշման հիման վրա 2006թ. նոյեմբերի 27-ին «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի ընդունումը՝ այդ ամենը ներկայացնելով որպես գերակա հանրային շահի հիմքով անձին սեփականությունից զրկելու հիմնախնդրի և գույքի օգտագործման իրավունքի հետ կապված իրավիճակը բարելավող և հետագա խախտումները կանխող միջոցներ:

Մենք համամիտ են կառավարության այս դիրքորոշման հետ: Զյուսիսային պողոտայի գործերը կարելի է բաժանել երկու խմբի. մինչև նշված օրենքի ընդունումը կատարված գույքի օտարում և օրենքի ընդունումից հետո կատարված գույքի օտարում: Առաջին խմբի բոլոր գործերում իրավուն-

²⁸ Տե՛ս Հավելված 5:

քի մասին հարցը օրենքի բացակայությամբ գույքի օտարման խնդիրն էր, որն օրենքի ընդունումից հետո, փաստորեն, լուծում ստացված: Ներկայումս գույքի օտարման որևէ գործընթաց չի կատարվում վերը նշված օրենքի շրջանցմամբ՝ հիմնվելով միայն կառավարության որոշման վրա:

6.1.8. Վճիռների թարգմանում ու տարածում

2013թ. հուլիսի 31-ի դրությամբ Արդարադատության նախարարության կայքում հրապարակված է եղել 37 հայերեն լեզվով թարգմանված վճիռ՝ ընդհանուր առմամբ կայացված 48 վճիռներից (77%): Վճիռները, որպես կանոն, թարգմանվում և հրապարակվում են զգալի ուշացումներով: Օրինակ, վերջին հրապարակված վճիռը *Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի* վճիռն է, որը ՄԻԵԴ-ի կողմից կայացվել է 2012թ. հուլիսի 12-ին և ուժի մեջ մտել նույն թվականի սեպտեմբերի 12-ին: Այսինքն, վճռի թարգմանումն ու հրապարակումը կատարվել է ուժի մեջ մտնելուց մոտ տասը ամիս անց: Դրան նախորդել է Վահե Գրիգորյանի գործով վճռի թարգմանության հրապարակումը 2013թ. հուլիսի 10-ին, մինչդեռ սույն գործով ՄԻԵԴ վճիռը ուժի մեջ էր մտել 17.12.2012թ.-ին, այսինքն՝ ուշացումը կազմել էր մոտ յոթ ամիս:

Վճռի պաշտոնական թարգմանության ու հրապարակման ուշացումը խնդիրներ է բարձրացնում գործի վերաբացման նպատակով նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարան դիմում ներկայացնելու հարցում: Արարատ Մուրադխանյանի գործով նոր հանգամանքի հիման վրա ներկայացված դիմումին ի պատասխան Վճռաբեկ դատարանը ընդունել է նախադեպային որոշում, համաձայն որի դիմումի ներկայացման 3-ամսյա ժամկետը սկիզբը պետք է հաշվել ոչ թե վճռի ուժի մեջ մտնելու ամսաթվի, այլ թարգմանված տեքստի պաշտոնական հրապարակման օրվանից կամ, ինչպես նշել է դատարանը, «Արդարադատության նախարարության համապատասխան կայքում տեղադրելու օրվանից»:²⁹ Այս նախադեպը վճիռների թարգմանությունների ուշացման պրակտիկայի դրական արձագանք է, որը երաշխիք է տալիս, որպեսզի գործի վերաբացման համար դիմում ներկայացնելու օրենքով սահմանված եռամսյա ժամկետը չվտանգվի:

Թարգմանության որակի, վճիռներում օգտագործված բարդ հասկացությունների ու տերմինների հայերեն բարեհունչ ու համարժեք արտահայտությունների ներմուծման առումներով մեր կողմից արձանագրվել են դրական զարգացումներ:

²⁹ Վճռաբեկ դատարանի 15.10.2012թ. ՎԲ-08/12 որոշումը Արարատ Մուրադխանյանի գործով, էջ 2:

Նախկին հետազոտությամբ արդեն նշել ենք, որ վճիռներից զատ ՄԻԵԴ-ն ընդունել է նաև բազմաթիվ որոշումներ (ընդունելիության, մասնակի ընդունելիության, անընդունելիության, մասնակի անընդունելիության, գործի վարույթը կարճելու, հաշտության մասին և այլն), որոնց մեջ կան բազմաթիվ որոշումներ, որոնք կարևոր նախադեպային նշանակություն ունեն ներպետական պրակտիկայի ու օրենսդրության զարգացման համար: Այդ առումով և՛ նախկինում, և՛ այժմ առաջարկվում է թարգմանվող գործերի մեջ ընդգրկել նաև այդ որոշումներից առավել կարևորները:

6. 1.9. Վճիռների ընդգրկելը դասընթացների ծրագրերում և դրանց հանրային իրազեկումը

Հայաստանի վերաբերյալ կայացված ՄԻԵԴ վճիռները հետևողականորեն ընդգրկվում են Դատական դպրոցի, Դատախազության դպրոցի և Փաստաբանական դպրոցի սկզբնական և շարունակական իրավաբանական կրթության ուսումնական ծրագրերում: Մինչ այժմ կայացված բոլոր վճիռները, պաշտոնական թարգմանությամբ, ներկայացվում են այս դպրոցներ հաճախող հետևյալ մասնագիտական խմբերին՝ դատավորներին, դատավորների օգնականներին, դատական ծառայողներին, դատական դպրոցի ունկնդիրներին, դատախազներին, Դատախազության դպրոցի ունկնդիրներին, ՀԿԾ քննիչներին, փաստաբաններին և Փաստաբանական դպրոցի ունկնդիրներին: Ուսումնական ծրագրերում վճիռները մշակվում ու մատուցվում են իրավիճակային խնդիրների, թեստերի, հետազոտական նյութերի և ուսումնական ֆիլմերի եղանակով: Դասավանդողների ուժերով թարգմանվում ու մատուցվում են ոչ միայն վճիռները, այլ նաև առավել կարևորություն ներկայացնող որոշումները, որոնք կայացվել են ընդդեմ Հայաստանի և որոնք նախադեպային կարևոր սահմանումներ են պարունակում: ՄԻԵԴ վճիռների իրազեկման նման պրակտիկան լիովին համապատասխանում է Նախարարների կոմիտեի «Անդամ պետություններում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեքստի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հրապարակման և տարածման մասին» Rec(2002)13 հանձնարարականի պահանջներին:

7. Ավարտված վարույթներ

Հինգ գործով Կոմիտեն հայտնել է վճռի կատարման վարույթի փակման մասին՝ հայտարարելով, որ Հայաստանի Հանրապետությունը կատարել է իր պարտավորությունը վճռի կատարման ուղղությամբ: Ներկայացնենք այդ գործերը և դրանց կատարման արդյունքների մասին մեր գնահատականները:

7.1. Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի

Վճիռը կայացվել է՝ 11.01.2007թ.

Ուժի մեջ է մտել՝ 11.04.2007թ.

Փաստերի, վարույթի ընթացքի և Կոմիտեի վերջնական որոշման մասին շարադրված է Նախկին գեկույցում:

Վճռում արձանագրված խախտումը կայանում էր հետևյալում. Արմեն Մկրտչյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180¹ հոդվածի հիմքով ենթարկվել է վարչական տույժի հանրահավաքների անցկացման կարգը խախտելու հիմքով (մասնակցել էր չարտոնված հանրահավաքի), մինչդեռ նման կարգ տվյալ ժամանակաշրջանում (2002թ. մայիս) օրենքով սահմանված չի եղել: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անձի հավաքների ազատության իրավունքի միջամտությունը օրենքով սահմանված կարգով չի եղել և արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում: Կոմիտեն 1082-րդ նիստում (27 մարտ 2008թ.) թիվ CM/ResDH(2008)2 բանաձևով որոշել է ավարտել գործի վարույթը՝ հայտարարելով, որ Հայաստանի Հանրապետությունը կատարել է Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իր պարտականությունները:

Սույն գործով որպես անհատական բնույթի միջոցներ Հայաստանի Հանրապետությունն ապահովել է վճռի թարգմանությունը, դրա հրապարակումը պաշտոնական տեղեկագրում և դրա տարածումը մի շարք իրավասու մարմիններում: Վճիռն ընդգրկվել է ՀՀ դատական դպրոցի, Դատախազության դպրոցի դասընթացների ծրագրերում: Վճիռը լայնորեն իրազեկվել է հանրության շրջանակներում ՉԼՄ-ների կողմից և հաճախ վկայակոչվել իրավաբանական տեքստերում (հայցերում, դիմումներում, հետազոտություններում, և այլն) փաստաբանների և հետազոտողների կողմից: Գործի վերաբացման վարույթ չի հարուցվել, քանի որ չի եղել նման դիմում դիմումատու՝ Արմեն Մկրտչյանի կողմից:

Ինչ վերաբերում է վճռի հետ կապված համակարգային փոփոխություններին, ապա մինչև վճռի ընդունումը ՀՀ Ազգային ժողովն արդեն ընդունել էր «Ժողովներ, հավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը և վճռի ընդունման պահի դրությամբ համակարգային խնդիրը, որն արձանագրել էր Եվրոպական դատարանն (օրենքի բացակայությունը) արդեն լուծված էր: Մենք համամիտ ենք Կոմիտեի այս որոշման հետ և գտնում ենք, որ սույն գործով Հայաստանի Հանրապետությունը կատարել է Եվրոպական դատարանի վճիռը:

7.2. Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի

Վճիռը կայացվել է՝ 06.12.2007թ.

Մտել է ուժի մեջ՝ 06.03.2008թ.

Եվրոպական դատարանը գտել է, որ Զաղաքացիական վերաքննիչ դատարանը խախտել է բողոքարկողների դատարանի մատչելիության իրավունքը՝ նրանց բացակայությամբ անցկացնելով դատական նիստ: Ըստ գործի փաստերի, Վերաքննիչ դատարանը ծանուցել էր բողոքարկումներին դատական նիստի օրվա ու ժամի մասին: Տվյալ ժամանակահատվածում դատական նիստի մասին ծանուցումը սահմանափակվում էր միայն ծանուցագրի փոստային առաքումով՝ առանց հավաստիանալու հասցեատիրոջ կողմից ծանուցագրի ստացվելու մեջ: Հետևելով այս պրակտիկային Վերաքննիչ դատարանը գտել էր, որ ծանուցումը կատարվել էր պատշաճ եղանակով և, հետևաբար, կաշկանդված չէր դատական նիստն անցկացնել անձի բացակայությամբ: Մինչդեռ փաստերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դատական նիստի օրվա դրությամբ ծանուցագիրը դեռ չէր հասել դիմումատուին: Հետևաբար, խնդրո առարկա հարցը կայանում էր նրանում, թե արդյոք ծանուցման նման եղանակը կարող էր համարվել պատշաճ ծանուցում՝ ըստ Եվրոպական կոնվենցիայի: Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ ծանուցման նման եղանակը պատշաճ չէր, քանի որ անձը զրկվել է դատական նիստին մասնակցելու հնարավորությունից:

Եվրոպական դատարանի վճռի հիման վրա երկու դիմումատուները նոր հանգամանքի հիմքով դիմել են Վճռաբեկ դատարան՝ խնդրելով վերաբացել գործի վարույթի և ապահովել նոր դատական քննություն իրենց մասնակցությամբ: Վճռաբեկ դատարանը որոշել է հարուցել գործի վերաբացման վարույթ և այդ հիմքով բեկանել է իր Զաղաքացիական վերաքննիչ դատարանի նախկին որոշումները և քաղաքացիական գործն ուղարկել

առաջին ատյանի դատարան նոր քննության: Առաջին ատյանի դատարանը անցկացրել է գործի նոր քննություն՝ ապահովելով դիմումատուների ներկայությունը դատական քննությանը՝ «*հաշվի առնելով Եվրոպական դատարանի 33-41 կետերում նշված իրավական եզրահանգումները պատշաճ ծանուցելու մասին*»: 13.08.2009թ. առաջին ատյանի դատարանը, կողմերի մասնակցությամբ կատարելով, ըստ էության, նոր քննություն, վերահաստատել է իր նախկին որոշումը ընդդեմ դիմումատուների: Գործի վերաքաջման ու նոր դատական ակտի մասին փաստերը կառավարությունն ուղարկել է Կոմիտեին: Կառավարությունը Կոմիտեին տեղեկացրել է նաև, որ վճռի հիման վրա փոփոխվել է կողմերին ծանուցելու դատական պրակտիկան և նոր կարգի համաձայն դատարանները կարող են սկսել դատական քննությունը միայն հավաստիանալուց հետո, որ կողմը ստացել է դատական նիստի մասին ծանուցագիրը: Ի հավելումս, կառավարությունը տեղեկացրել է նաև վճռի թարգմանման, հրապարակման, իրավասու մարմիններին տեղեկացնելու և Դատական դպրոցի ու դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում վճռի ներառելու մասին:

Հաշվի առնելով վերը նշվածը, 2011թ. սեպտեմբերի 14-ին իր 1120-րդ նիստում Կոմիտեն որոշել է ավարտել վճռի կատարման վերահսկողության վարույթը՝ Յայաստանի Հանրապետության կողմից վճռի կատարման իր պարտականությունը կատարելու հիմքով:

Մենք համամիտ ենք Կոմիտեի հետ: Ի թիվս անհատական բնույթի միջոցների (փոխհատուցման վճարում և գործի վերաքաջում), այս վճռի հիման վրա հիմնովին փոփոխվեց դատական նիստերի ծանուցման կարգը: Եթե նախկինում պատշաճ ծանուցելու պահանջը ապահովելու համար դատարանի կողմից բավարար էր կողմերին դատական նիստի վայրի և ժամի մասին ծանուցագրի զուտ առաքումը, ապա ներկայումս բոլոր գործերով դատարանները պարտավոր են դատական նիստը սկսել միայն հետադարձ ծանուցման անդորրագրի ստացումից հետո, որը դատավարական կարևոր երաշխիք է, որպեսզի դատավարության կողմի դատարանի մատչելիության իրավունքը չխախտվի:

Ինչ վերաբերում է գործի վերաքաջմանը, ապա այս առումով ներպետական դատարանները կատարել են «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված վճիռների հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաքացելու մասին» Նախարարների կոմիտեի թիվ R (2000) 2 հանձնարարականի պահանջները: Վճռաբեկ դատարանը ապահովել է գործի վերաքաջման վարույթ, որի արդյունքում իրականացվել է գործի վերաքննություն, որի շրջանակներով վերականգնվել է դիմումատուների status quo-ն՝ մինչև խախտումը եղած իրավիճակը: Տվյալ դեպքում այդ իրավիճակը գործով ըստ էության դատական քննությա-

նը նրանց ներկայության ապահովումն էր առաջին ատյանի դատարանում: Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ դատարանը կայացրել է դիմումատուների համար ոչ բարենպաստ դատական ակտ, այդ հանգամանքն արդեն դուրս է եկրոպական կառույցների վերահսկողության շրջանակներից և սուվերեն իրավական համակարգի իրավագործության առարկա է:

7.3. Պայքար և հաղթանակ ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի

Վճիռը կայացվել է՝ 20.12.2007թ.

Մտել է ուժի մեջ՝ 02.06.2008թ.

Սույն գործով Եվրոպական դատարանը արձանագրել է դատարանի մատչելիության իրավունքի խախտում այն հիմքով, որ Վճռաբեկ դատարանը վերադարձրել էր Ընկերության վճռաբեկ բողոքը առանց այն քննելու: Վերջինս հրաժարվել էր քննել դիմումը այն պատճառաբանությամբ, որ Ընկերությունը վճռաբեկ բողոք ներկայացնելու համար նախատեսված պետական տուրքը չէր վճարել՝ պատճառաբանելով մի շարք ֆինանսական խնդիրներ (Ընկերությունը Վճռաբեկ դատարանին ուղղված դիմումին կցել էր պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդություն): Եվրոպական դատարանը ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ դիմումը վերադարձնելու մասին որոշումը կայացվել էր ոչ թե դատական ակտի, այլ գրասենյակի աշխատակցի կողմից՝ սովորական նամակի տեսքով: Այսինքն՝ դատական քննություն չէր կատարվել: Զանի որ վերադարձի մասին որոշումը չէր կայացվել դատական քննության հիման վրա, Վճռաբեկ դատարանը հետամուտ չէր եղել այն փաստերի մեջ, որոնք Ընկերությունը ներկայացրել էր իր միջնորդության մեջ որպես հիմք պետական տուրքը վճարելու անհնարինության մասին: Նման հանգամանքներում Եվրոպական դատարանը գտել է, որ դիմումը վերադարձնելու մասին որոշումը կայացվել էր առանց ուսումնասիրելու վճարումը կատարելու անհնարինության մասին Ընկերության փաստարկները, որի հանգամանքներում Ընկերության դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակվել էր անհամաչափորեն:

02.12.2011թ.-ին Կոմիտեն որոշել է ավարտել գործով վարույթը՝ հայտարարելով, որ Հայաստանի Հանրապետությունը կատարել է վճիռն ամբողջությամբ: Մենք համամիտ ենք այդ որոշման հետ հետևյալ պատճառաբանությամբ:

Անհատական բնույթի միջոցների շարքում կառավարությունը կատարել է սահմանված փոխհատուցման վճարները: Ընկերությունը նոր հան-

գամանքի հիմքով դիմել է Վճռաբեկ դատարանին և վերջինս 03.11.2008թ. կայացրել է գործի վերաքաջման մասին որոշում, բեկանել է իր նախկին որոշումը և գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության: Նոր քննության շրջանակներում դատարանը կայացրել է նույն որոշումը գործի ելության վերաբերյալ:

Եվրոպական դատարանն իր որոշման մեջ անդրադարձել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության 70-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթին, որն արգելում էր դատարաններին առևտրային կազմակերպություններին, ի տարբերություն ֆիզիկական անձանց, ազատել պետական տուրքի վճարումից: Ըստ Եվրոպական դատարանը, նման արգելքն ինքնին խնդիր էր առաջացնում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ դատարանի մատչելիության իրավունքի խմաստով: Որպես ընդհանուր բնույթի միջոց, 07.04.2009թ.-ին Քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ մասը վերացվել է: Վերացվել է նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը, որն ուներ նույնաբովանդակ տեքստ՝ երկու դրույթներով էլ ուղղակիորեն արգելված էր առևտրային կազմակերպություններին ազատել պետական տուրքի վճարումից: Նշվածը վկայում է թիվ Rec(2004)5 հանձնարարականի պահանջների կատարման մասին:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ վճիռը թարգմանվել և հրապարակվել է ՀՀ պաշտոնական տեղեկագրում, ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետ կայքում և ՀՀ դատական իշխանության ինտերնետ կայքում: Վճիռը ներառված է ՀՀ դատական դպրոցի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ծրագրերում և պարբերաբար ներկայացվում է դասընթացների մասնակիցներին:

7.4. Միշա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի

Վճիռը կայացվել է՝ 28.06.2007թ.

Ուժի մեջ է մտել՝ 28.09.2007թ.

Սույն գործով արձանագրվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ ազգային դատարանները դատապարտման հիմքում, ապացույցների զանգվածում, թողել են խոշտանգում ստացված երեք ապացույցներ՝ մեղադրյալի ինքնախոստովանությունը և երկու վկաների ցուցմունքները, որի հիմքով դատավարությունը որպես ամբողջություն դարձել է անարդար: Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ թեև ազգային դատարանները դատապարտելիս հիմնվել են նաև այլ ապացույցների վրա և նշված

երեք ապացույցները ապացուցողական վճռորոշ նշանակություն չունենին, եթե անթույլատրելի ապացույցը ստացվել է խոշտանգման եղանակով, նույնիսկ դրա նվազ ապացուցողական նշանակության դեպքում նման ապացույցը երբեք չպետք է դրվի մեղադրանքի և դատապարտման հիմքում: Ըստ Եվրոպական դատարանի, «Մեղադրող ապացույցը, լինի դա խոստովանական կամ իրեղեն ապացույցի տեսքով, որը ձեռք է բերվել բռնությունների գործադրման միջոցով կամ դաժանությունների կամ այլ վերաբերմունքի, որը կարելի է բնութագրել որպես խոշտանգում, երբեք չպետք է դրվի մեղքի ապացույցի հիմքում՝ անկախ դրա ապացուցողական նշանակությունից»:

Դատարանը սահմանել է արդար դատաքննության իրավունքի խախտում և շնորհել 4,000 եվրո ոչ նյութական (բարոյական) վնասի փոխհատուցում:

2011թ. հունիսի 8-ի նիստում Կոմիտեն որոշում կայացրեց ավարտել վճռի կատարման վերահսկողության վարույթը այն հիմքով, որ Հայաստանի Հանրապետությունը կատարել է վճիռը՝ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով:³⁰ Մենք համաձայն ենք Կոմիտեի որոշման հետ հետևյալ պատճառաբանությամբ:

Վճիռը թարգմանվել ու հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում: Վճիռը լայնորեն իրազեկվել է բոլոր իրավասու մարմիններին՝ դատարաններին, դատախազական և քննչական մարմիններին, փաստաբաններին: Ընդդեմ Հայաստանի Հանրապետության կայացված վճիռների շարքում այս վճիռը ամենահաճախ վկայակոչվող դատական ակտերից է իրավաբանական տեսք ստերում: Այն ընդգրկված է Դատական դպրոցի, Դատախազության դպրոցի և Փաստաբանական դպրոցի ուսումնական ծրագրերում:

Վճռի հիման վրա հարուցվել է գործի վերաբացման վարույթ, որի արդյունքում բեկանվել են Վճռաբեկ դատարանի ու Վերաքննիչ դատարանի նախկին որոշումները և գործն ուղարկվել է առաջին ատյանի դատարան՝ ըստ Էուրյան Նոր քննության: Վերաքննության արդյունքում կրկին գնահատվել են գործով ապացույցները, այդ թվում նաև Նոր ապացույցներ, սակայն ապացույցներից բացառելով Եվրոպական դատարանի 07.06.2007թ. որոշման մեջ նշված և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված անթույլատրելի ապացույցները՝ վկաներ Գ.Տավարացյանի, Կ.Անտոնյանի և ամբաստանյալի ինքնախոստովանական ցուցմունքները: Այսինքն, վերականգնվել է մեղադրյալի status quo-ն՝ մինչև խախտումը եղած իրավիճակը, որից հետո անցկացվել է գործով ըստ Էուրյան քննությունն պաշտպանական կողմի դատավարական բոլոր երաշխիքներով: Այդ ամենից հետո առաջին ատյանի դատարանը վերահաստատել է նախկին դատավճիռը և հաշվի առնելով, որ ամբաստանյալը կրել է Սյունի-

³⁰ Տե՛ս Կոմիտեի թիվ CM/ResDH(2011)40 փաստաթուղթը:

քի մարզի առաջին ատյանի դատարանի 19.06.2002թ. դատավճռով նշանակված 10 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը և չկրած մաս չունի, համարել է պատիժը կրած: Վերաքննիչ դատարանը ուժի մեջ է թողել դատավճիռը, իսկ Վճռաբեկ դատարանը վերադարձրել է բողոքը:

Այն հանգամանքը, որ 19.06.2002թ.-ի խնդրահարույց դատական ակտի ելքը վերանայման վարույթի արդյունքում մնացել է նույնը, չի կարող հիմք համարվել պնդելու համար, որ Եվրոպական դատարանի վճիռը չի կատարվել, քանի որ վերանայման վարույթում դատարանը հանգել է նույնանման եզրահանգման գործով ապացույցների գնահատման արդյունքում, որը որպես դատավարական փուլ և երևույթ դուրս է եվրոպական մարմինների վերահսկողության շրջանակից: Հակառակը պնդել կնշանակի, որ եվրոպական մարմինները ոչ թե ազգային մարմիններին օժանդակ, այլ վերադաս կառույցներ, որը հակասում է Կոնվենցիոն մարմինների սուբսիդիարության սկզբունքին: Ուստի, այնքանով, որքանով իշխանությունները ապահովել են գործի վերաբացման վարույթ ու վերաքննության հնարավորություն Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումների բացառմամբ, Հայաստանը կատարել է թիվ Rec(2000)2 Հանձնարարականի պահանջները:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ վերանայման վարույթում տեղի ունեցած որոշ խախտումներ նույնպես կարող են Եվրոպական դատարան նոր գանգատ ներկայացնելու հիմք հանդիսանալ «նոր փաստի» հիմքով, որից տեղյակ չէր Եվրոպական դատարանը, երբ կայացնում էր իր սկզբնական վճիռը: Հաշվի առնելով, որ վերաբացման վարույթի ավարտից հետո այդ վարույթի ընթացքում տեղի ունեցած խախտումների հիմքով նոր գանգատ չի ներկայացվել Եվրոպական դատարան, գործի վերաբացման վարույթի ընթացքում էական խախտումներ տեղի չեն ունեցել, որոնք կգրավեին Եվրոպական դատարանի ուշադրությունը:

7.5. Մելտեքս ՍՊԸ-ն և Մետրոպ Մոլետայանս ընդդեմ Հայաստանի

Վճիռը կայացվել է՝ 17.06.2008թ.

Ուժի մեջ է մտել՝ 17.09.2008թ.

2002 թվականի ապրիլին Ընկերությունը գրկվել է հեռուստահեռարձակման արտոնագրից, իսկ 2003 թվականի ընթացքում մասնակցել է արտոնագրման յոթ մրցույթների տարբեր հաճախականությունների տիրույթներում, սակայն բոլոր մրցույթներում Հեռուստատեսության և ռադիոյի ազ-

գային հանձնաժողովի (ՀՌԱՀ) որոշումներով համարվել է պարտված: Բոլոր մրցույթներում ՀՌԱՀ-ը հրաժարվել է Ընկերությանը տրամադրել դիմումները մերժելու մասին առանձին որոշումներ: ՀՌԱՀ-ը բավարարվել է միայն հաղթող կազմակերպության վերաբերյալ կայացրած իր որոշման պատճեն Ընկերությանը ուղարկելով՝ պատճառաբանելով, որ այդ որոշումը ինքնին հանդիսանում է նաև արտոնագրման դիմումը մերժելու մասին որոշում: Այսինքն, դիմումը մերժելու մասին որոշումները չեն ունեցել պատճառաբանական մաս:

Եվրոպական դատարանը 2008թ. հունիսի 16-ին կայացրել է վճիռ, որում սահմանել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ Ընկերության իրավունքների միջամտությունը, արտոնագրի մերժումը, օրենքով սահմանված կարգով չի եղել, քանի որ որոշում կայացնող մարմինը չի պատճառաբանել իր որոշումները: Այսպիսով, ՄԻԵԴ-ն որոշել է, որ ՀՌԱՀ-ը չի ապահովել օրինականության սկզբունքը իր որոշումներում, քանի որ այդ սկզբունքը պահանջում է, որ հանրային մարմինները պետք է պատճառաբանեն իրենց որոշումները:

Վճռի կատարման վարույթում իշխանությունները նախաձեռնել են, որպես անհատական բնույթի միջոց, առաջին, ապահովել Ընկերության մասնակցությունը նոր մրցույթի, երկրորդ, իսկ որպես ընդհանուր բնույթի միջոց՝ բարեփոխել Ռադիոյի և հեռուստատեսության մասին օրենքն այնպես, որպեսզի ՀՌԱՀ-ը մանրամասնորեն պատճառաբանի իր որոշումները արտոնագրերի դիմումները մերժելու մասին: Իր հերթին, Ընկերությունը տեղյակ է պահել Կոմիտեին, որ ներպետական մակարդակում նախաձեռնել է յոթ մրցույթների հիմքով ՀՌԱՀ որոշումների վերաբերյալ կայացված դատական որոշումները վերանայելու և այդ հիմքով 2004 թվականին ավարտված երկու դատական գործերը վերաբացելու վարույթներ: Կոմիտեն դա ընդունել է ի գիտություն և հրավիրել կառավարությանը տեղյակ պահել գործի վերաբացման վարույթի զարգացումների մասին: Այսպիսով, վճռի կատարման վարույթում Կոմիտեի վերահսկողության առարկաներ էին, առաջին, օրենքի փոփոխությունը, երկրորդ, նոր մրցույթի անցկացումը և երրորդ, դատական գործերի վերաբացման վարույթները:

10.06.2010թ.-ին օրենքում կատարվեցին մի շարք փոփոխություններ, մասնավորապես, 49-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվեց, որ ՀՌԱՀ-ը մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումը կայացնում է վարկանիշային քվեարկության արդյունքների հիման վրա և որ ՀՌԱՀ-ի որոշումները պետք է լինեն պատշաճ հիմնավորված և պատճառաբանված:

2010 թվականի դեկտեմբերին անցկացվել է հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման նոր մրցույթներ, որին մասնակցել է Ընկերությունը և պարտվել: ՀՌԱՀ-ը մերժել է Ընկերության դիմումը՝ առանձին որո-

շումով տեղեկացնելով Ընկերության մերժման պատճառների ու հիմքերի մասին:

2009 թվականին Ընկերությունը երկու դիմումով սկսել է դատական երկու գործերի վերաբացման վարույթներ, որոնց սակայն մերժվել են Վճռաբեկ դատարանի կողմից Քաղաքացիական օրենսգրքի 204.28-րդ հոդվածի կիրառմամբ: Ընկերությունը վիճարկել է այս հոդվածի սահմանադրականության հարցը ՀՀ Սահմանադրական դատարանում և ստացել բարենպաստ դատական ակտ Սահմանադրական դատարանից և այդ հիմքով կրկին դիմել Վճռաբեկ դատարան Սահմանադրական դատարանի որոշումը որպես «նոր հանգամանք» հանդիսանալու հիմքով: Այս անգամ Վճռաբեկ դատարանը հարուցել է վերաբացման վարույթ, սակայն արդյունքում մերժել է վիճահարույց դատական ակտերը բեկանելու և դատական գործերը վերաբեկնելու պահանջը՝ կիրառելով Քաղաքացիական օրենսգրքի 204.33-րդ հոդվածը: Դիմումատուն այնուհետև վիճարկել է այս հոդվածի սահմանադրականության հարցը Սահմանադրական դատարանում և ստացել բարենպաստ դատական ակտ, որի հիման վրա կրկին դիմել է Վճռաբեկ դատարան «նոր հանգամանքի» հիմքով՝ գործերի վերաբացման և վերաբեկնության խնդրանքով: Այս դիմումները կրկին, արդեն երրորդ անգամ, մերժվել են Վճռաբեկ դատարանի կողմից և այս անգամ դատարանը ընդհանրապես հրաժարվել է հարուցել վերանայման վարույթ՝ գտնելով, որ Սահմանադրական դատարանի վերջին որոշումը գործի վերաբացման «նոր հանգամանք» չէ: Ընկերությունը կրկին, արդեն չորրորդ անգամ, դիմել է Սահմանադրական դատարան, սակայն Սահմանադրական դատարանը հրաժարվել է ընդունել դիմումը վարույթ՝ պատճառաբանելով, որ արդեն դիրքորոշում հայտնել է տվյալ հարցի կապակցությամբ և որ հետագա խնդիրները ենթակա են կարգավորման օրենսդրի կողմից:

Հաշվի առնելով, որ 14.09.2009թ. թիվ 1092 և 02.03.2010թ. թիվ 1078-րդ նիստերում Նախարարների կոմիտեն ՀՀ կառավարությունից պահանջել էր ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Մելտեքս Ընկերության կողմից Նախաձեռնած վերանայման դատական վարույթների մասին, 09.04.2010թ. ՀՀ կառավարությունը Կոմիտեին է ուղարկել ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2010թ. որոշման թարգմանությունը և նշել, որ նշված որոշմամբ՝ որպես «նոր երևան եկած հանգամանք» Ընկերությունը նորից կարող է դիմել Վճռաբեկ դատարան գործի վերաբացման դիմումով:

Կոմիտեի կողմից վերահսկողության վերը նշված զարգացումների ընթացքում 2009թ. հոկտեմբերին և 2012թ. դեկտեմբերին Ընկերությունն երկու նոր գանգատ է ուղարկել Եվրոպական դատարան՝ առաջինով վիճարկելով Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճռի չկատարելը որպես Ընկերության նկատմամբ Կոնվենցիայի կրկնակի

խախտում, երկրորդով վիճարկելով 2010 թվականի դեկտեմբերի մրցույթի արդյունքները՝ բարձրացնելով մրցույթի անցկացման և հաղթողին որոշելու ընթացակարգային հարցեր:

Վերը նշված զարգացումների լույսի ներքո 2011 թվականի հունիսի 8-ին Կոմիտեն անսպասելի որոշում կայացրեց վարույթը փակելու մասին այն հիմքով, որ Հայաստանի Հանրապետությունը կատարել է վճռի կատարման հետ կապված իր բոլոր պարտականությունները:³¹

Մենք համաձայն չենք Կոմիտեի որոշման հետ հետևյալ պատճառաբանությամբ:

Գտնում ենք, որ վճռի կատարման վարույթն իրականում անավարտ է մնացել, իսկ Հայաստանի Հանրապետությունն էլ չի կատարել խախտված իրավունքի վերականգման ուղղությամբ մի քանի կարևոր քայլեր:

Առաջին. ի սկզբանե որոշվել էր կառավարության և Կոմիտեի միջև, որ Ընկերությանը նոր մրցույթին մասնակցելու հնարավորություն տալը խախտված իրավունքի վերականգնման *restitutio in integrum* եղանակ է: Սա սխալ մոտեցում է: Խախտված իրավունքը վերականգնելը նշանակում է իրավախախտման զոհի status quo-ի (մինչև խախտումը եղած իրավիճակի) վերականգնում՝ այսինքն անցյալին, այլ ոչ թե ապագային ուղղված գործողություն՝ իրավախախտման զոհին նոր փորձության առջև կանգնեցնելով: Եթե հանգամանքների բերումով հնարավոր չէ վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը, ապա կարիք է չկա նոր մրցույթին մասնակցելու հնարավորություն տալը ներկայացնել որպես պետության կողմից Ընկերությանը տրված հնարավորություն: Ի վերջո, նոր մրցույթին մասնակցելու իրավունքը Ընկերությունը ստացել է օրենքի ուժով, այլ ոչ թե պետության կողմից տրված արտոնությամբ, որպեսզի վերջինս կառավարության կողմից ներկայացվի որպես խախտված իրավունքի ուղղությամբ կիրառված ջանք:

Գտնում ենք, որ նոր մրցույթին մասնակցելու հանգամանքը չպետք է դիտվի որպես խախտված իրավունքի վերականգնման անհատական բնույթի միջոց նաև այն հիմքով, որ դրանով չի ապահովվում հեռուստաընկերության համար այն նույն պայմանները, ինչ գոյություն ունեին 2003թ. մրցույթների ընթացքում: Մենք գտնում ենք, որ եթե խոսքը վերաբերում է նոր մրցույթի անցկացմանը, ապա դա պետք է արվի նախկին մրցույթների ընթացքում ՀՀ-ի կողմից գնահատված մրցույթային փաթեթների **վերազնահատմամբ**. այսինքն վերանայմամբ: Այսինքն ՀՀ-ը պետք է վերանայի իր որոշումները և վերազնահատի մրցակիցների մրցույթային փաթեթները և կայացնի որոշում, սակայն այս անգամ պատճառաբանելով այն-

³¹ Տե՛ս Կոմիտեի փաստաթուղթ CM/ResDH(2011)39:

այես, ինչպես պահանջվում է ներկայիս ներպետական օրենսդրությամբ և ես չափանիշներով, քանի որ հենց չպատճառաբանելն էր կասկածի տակ դրել մրցույթների օրինականության հարցը և հենց չպատճառաբանելն էր հանգեցրել Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության իրավունքի խախտման փաստի ճանաչմանը՝ ՄԻԵԴ-ի կողմից: Հաշվի առնելով նշվածը, գտնում ենք, որ Նոր մրցույթին մասնակցելը չպետք է դիտվեր Կոմիտեի կողմից որպես խախտված իրավունքը վերականգնելու անհատական միջոց:

Երկրորդ, Կոմիտեն հաշվի չի առել, որ գործի վերաբացման վարույթները, որին այնքան նշանակություն են տալիս ես մարմինները, դեռ ընթացքի մեջ էին: Ինչ իմաստ ուներ Կոմիտեի կողմից ընդունել և ի գիտություն գրանցել Ընկերության փաստաբանների հաղորդումները գործի վերաբացման մասին, եթե ի վերջո դրանց որևէ նշանակություն չէր տրվելու և Նույնիսկ անդրադարձ չէր արվելու վարույթի փակման մասին որոշման մեջ: Այն օրվա դրությամբ, երբ Կոմիտեն ընդունեց վարույթը փակելու մասին որոշումը (08.06.2011թ.), Մելտեքս ՍՊ Ընկերությունը Սահմանադրական դատարանում վիճարկում էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի դրույթների՝ Վճռաբեկ դատարանի կողմից դրա կիրառման սահմանադրականության հարցը, որն ուղղակիորեն առնչվում էր Ընկերության գործի վերաբացմանը, քանի որ հենց վերաբացման համար ներկայացված դիմումի մերժման առնչությամբ էր Վճռաբեկ դատարանը վերջին նշված Նորմը կիրառել այնպես, որ բարձրացել դրա կիրառության սահմանադրականության մասին հարց: Ընդ որում, հենց այդ դիմումով հարուցված վարույթի ընթացքում Կոմիտեի որոշումից մոտ մեկ ամիս հետո ծնվեց Սահմանադրական դատարանի ՍԴՈ-946 որոշումը, որի կարևորությունը Եվրոպական վճիռների կատարման ներպետական կառուցակարգերի բարելավման գործում դժվար է գերազնահատել:

Երրորդ, Կոմիտեն հաշվի չի առել, որ Եվրոպական դատարանում դեռ ընթացքի մեջ էր 2009 թվականի հոկտեմբերին ներկայացված դիմում, որով վիճարկվող իրավունքի և փաստերի մասին հարցերը ուղղակիորեն առնչվում էին Կոմիտեի վերահսկողության առարկա խնդիրներին: Դրանք էին Վճռաբեկ դատարանի կողմից գործի վերաբացման երկու դիմումների մերժման հիմքում դրված մեկնաբանությունները, որոնք ներկայացվել էին Եվրոպական դատարանին որպես «Նոր հանգամանք» կրկնակի խախտում արձանագրելու համար:

Վերջ նշված երեք հանգամանքների հիմքով գտնում ենք, որ վճռի կատարման վարույթն իրականում մնացել է անավարտ:

Վերջ նշվածից մասամբ բխում է նաև մեր հաջորդ պնդումը այն մասին, որ վճիռն ամբողջությամբ չի կատարվել Հայաստանի Հանրապետության

կողմից: Այդ իմաստով ներկայացնում ենք հետևյալ եզրահանգումները:

Առաջին, Ընկերությունը, ընդհանուր առմամբ երեք անգամ երկուական դիմումներով դիմել է Վճռաբեկ դատարանի նոր հանգամանքների հիմքով Վճռաբեկ դատարանի 2004 թվականի որոշումները վերանայելու պահանջով: Դիմումներով Վճռաբեկ դատարանից պահանջել էր հարուցել վերանայման վարույթ և վերանայել 2004թ. իր որոշումները, որոնցով մերժել էր Տնտեսական դատարանի որոշումների դեմ Ընկերության բերած վճռաբեկ բողոքները: Վճռաբեկ դատարանը բոլոր չորս դիմումների կապակցությամբ հարուցել է վերանայման վարույթներ, դիմումներն ընդունել է վարույթ, սակայն հետագա քննության ընթացքում մերժել է դիմումները և հրաժարվել է վերանայել Տնտեսական դատարանի որոշումները: Վճռաբեկ դատարանը գտել է, որ, առաջին, Կոնվենցիայի 10-րդ հոդվածը խախտվել է ոչ թե վիճահարույց մրցույթների ընթացքում, այլ մրցույթներից հետո՝ ԶՌԱՀ-ի կողմից որոշում կայացնելիս պատշաճ պատճառաբանություն չներկայացնելով, հետևաբար, նման հանգամանքներում անհրաժեշտություն չկար վերանայել Տնտեսական դատարանի որոշումները: Երկրորդ, քանի որ Եվրոպական դատարանը գտել է, որ ԶԶ դատարանները Կոնվենցիայի խախտում թույլ չեն տվել (6-րդ հոդվածով խախտում չի արձանագրվել), հետևաբար նույնպես հիմք չկա Տնտեսական դատարանի որոշումները վերանայելու համար: Այսպիսով, թեև հարուցվել են վերաքննության վարույթներ, սակայն դատական ակտերի վերանայում, վերաքննություն տեղի չի ունեցել: Միայն վերաքննության արդյունքում Ընկերությունը իրական, արդյունավետ հնարավորություն կստանար վիճարկելու ԶՌԱՀ-ի 2003 թվականների միջամտող բնույթի վարչական ակտերի հիմքերը, դրանց բովանդակային մասերը: Նման հանգամանքներում կարելի է պնդել, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթ հարուցելով, սակայն վերաքննություն չանցկացնելով Հայաստանը չի ապահովել գործի վերաքննության արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմ, որը կարող էր հանգեցնել խախտված իրավունքի վերականգնմանը: Այս հիմքով կարող ենք պնդել նաև, որ Հայաստանը իրականում չի կատարել ՆԿ թիվ Rec(2000)2 Հանձնարարականի պահանջները, քանի որ վերանայման վարույթ հարուցելը դեռ *restitution in integrum* չէ:

Երկրորդ, մենք գտնում ենք, որ չի կատարվել նաև ընդհանուր բնույթի միջոցների կիրառելու պայմանը: Դրա շրջանակներում, հիշեցնենք, Կոմիտեն և կառավարությունը ձեռք էին բերել համաձայնություն կարգավորող օրենքը փոփոխել այնպես, որպեսզի ԶՌԱՀ-ը մանրամասն պատճառաբաներ իր որոշումները արտոնագիրը տալու կամ մերժելու մասին: Դրա նպատակը իրավական որոշակիության ընդհանուր պայմանի ապահովումն էր հանձնաժողովի որոշումներում: 2010 թվականի մրցույթի արդյունքների հիմքով

ՄԻԵԴ ներկայացված գանգատում Ընկերությունը վիճարկում էր ՀՌԱՀ-ի վարկանիշային քվեարկության և գրավոր պատճառաբանության միջև անհամապատասխանությունը, մասնավորապես, որ վարկանիշային քվեարկության եղանակը չէր ապահովում իրավական որոշակիություն, քանի որ քվեարկության վարկանիշները չէին արտահայտում գրավոր պատճառաբանության հիմքերը, օրինակ, որ գրավոր պատճառաբանության մեջ ՀՌԱՀ-ը կարող էր վեցից հինգ չափորոշիչների հիմքով կազմակերպության մրցութային փաթեթը գնահատել «լավ», իսկ մեկ չափորոշիչով՝ «վատ», մինչդեռ վարկանիշային քվեարկության արդյունքներով այդ գնահատականները կարող էին արտահայտվել «զրո» թվանիշներով: Այսինքն, անկախ նրանից, թե ինչ գրավոր պատճառաբանություն էր տրվում գրավոր փաստաթղթում, վարկանիշային քվեարկության արդյունքները ինքնուրույն ապրող գնահատականներ էին: Որոշումները պատճառաբանելու նման եղանակը, Մելտեքս ՍՊԸ-ի օրինակով, չէր ապահովում իրավական որոշակիություն: Հետևաբար, անհրաժեշտ էր ոչ թե ավարտել վերահսկողական վարույթը, այլ շարունակել և պարտադրել օրենքը բարեփոխել այնքան ժամանակ, մինչև որ սահմանվեին ՀՌԱՀ-ի կողմից իրավամբ պատճառաբանված որոշումներ տալու իրական ու արդյունավետ երաշխիքներ:

8. Հավելվածներ

Հավելված 1

Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)3 հանձնարարականն անդամ պետություններին «Դատավարության չափազանց երկար տևողության դեմ պաշտպանության արդյունավետ միջոցների մասին»

(ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2010 թվականի փետրվարի 24-ին, իր 1077-րդ նստաշրջանի ընթացքում)

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն,

Հիշեցնելով, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարները, հանդիպելով 2005 թվականի մայիսի 16-ին և 17-ին Վարշավայում ընթացող Երրորդ Գագաթաժողովում, հայտնել են իրենց վճռականությունը ապահովելու, որ արդյունավետ պաշտպանության ներպետական միջոցները հասանելի են յուրաքանչյուր անձի համար, ով ունի վիճելի բողոք Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի խախտման վերաբերյալ (ETS թիվ 5 – այսուհետ «Կոնվենցիա»),

Հիշեցնելով Նախարարների կոմիտեի Rec(2004)6 հանձնարարական-առաջարկությունն անդամ պետություններին «Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին» և Նպատակ ունենալով զարգացնել այն՝ գործնական ցուցումներ տալով անդամ պետություններին դատավարության չափազանց երկար տևողության համատեքստում,

Հիշեցնելով նաև Նախարարների կոմիտեի հռչակագիրը «Ազգային և եվրոպական մակարդակներով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի արդյունավետ կատարումն ապահովելու ուղղությամբ տևական գործողությունների մասին» (ընդունված է 2006 թվականի մայիսի 19-ին, իր 116-րդ նստաշրջանի ընթացքում),

Ողջունելով այս կապակցությամբ Եվրոպայի խորհրդի այլ մարմինների աշխատանքը, հատկապես՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով»

Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի աշխատանքները,

Ընդգծելով Կոնվենցիայի համաձայն Բարձր պայմանավորվող կողմերի պարտավորությունները՝ իրենց իրավագրության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովելու այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայով, այդ թվում՝ 6-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքնության իրավունքը և 13-րդ հոդվածով ամրագրված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը,

Հիշեցնելով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ «Դատարան») նախադեպային իրավունքը, հատկապես՝ նրա պիլոտային վճիռները, այս կապակցությամբ անդամ պետությունների համար նախատեսում են կարևոր ցուցումներ և հրահանգներ,

Վերահաստատելով, որ արդարադատության իրականացման չափազանց երկար ուշացումները խիստ վտանգավոր են, մասնավորապես իրավունքի գերակայության և արդարադատության մատչելիության առումով,

Ստավախություն հայտնելով, որ դատավարության չափազանց երկար տևողությունը, որը հաճախ պայմանավորված է համակարգային խնդիրներով, մինչ այժմ ամենատարածված խնդիրն է, որը հանդիպում է Դատարանին հասցեագրված գանգատներում, և որ այդպիսով այն անմիջական վտանգ է ներկայացնում Դատարանի արդյունավետության և, հետևաբար, Կոնվենցիայի համաձայն մարդու իրավունքների պաշտպանության համակարգի համար,

Համոզված լինելով, որ դատավարության չափազանց երկար տևողության խնդրի լուծման միջոցառումների նախատեսումը կնպաստի՝ սուբսիդիարության սկզբունքի համաձայն, մարդու իրավունքների պաշտպանվածության բարձրացմանն անդամ պետություններում և Կոնվենցիայի համակարգի արդյունավետության պահպանմանը, այդ թվում՝ օգնելով նվազեցնել Դատարան ներկայացվող գանգատների քանակը,

Առաջարկում է, որպեսզի անդամ պետությունների կառավարությունները.

1. ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցառումները ապահովելու, որ ներպետական դատավարության բոլոր փուլերը՝ անկախ դրան

տրվող ներպետական որակավորումից, որոնք կարող են վերաբերել քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կամ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի որոշմանը, ավարտվեն ողջամիտ ժամկետներում,

2. այս կապակցությամբ, ապահովեն, որպեսզի ներդրվեն կառուցակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեն հայտնաբերել այն դատավարությունները, որոնք կարող են չափազանց երկար տևողություն ունենան, ինչպես նաև հայտնաբերել դրանց հիմքում ընկած պատճառները՝ այդպիսով նպատակ ունենալով կանխելու 6-րդ հոդվածի ապագա խախտումները,
3. ընդունեն, որ այն դեպքերում, երբ դատավարության չափազանց երկար տևողության հիմքում ընկած է համակարգային խնդիր, անհրաժեշտ են ձեռնարկել միջոցառումներ այդ խնդիրը, ինչպես նաև դրա հետևանքները առանձին գործերով լուծելու համար,
4. ապահովեն, որպեսզի գոյություն ունենան այնպիսի միջոցներ, որոնք թույլ կտան արագացնել այն դատավարությունները, որոնք կարող են չափազանց երկար տևողություն ունենալ՝ նպատակ ունենալով կանխելու այդ գործընթացը,
5. ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցառումները ապահովելու, որ արդյունավետ պաշտպանության ներպետական միջոցներն առկա են ողջամիտ ժամկետում արդարացի դատաքննության իրավունքի խախտման վերաբերյալ բոլոր վիճելի բողոքների համար,
6. համոզվեն, որ պաշտպանության նման միջոցներն առկա են դատավարության բոլոր այն փուլերի համար, որոնք կարող են վերաբերել քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կամ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի որոշմանը,
7. այս կապակցությամբ, այն դեպքերում, երբ դատավարությունը չափազանց երկար տևողություն ունի, ապահովելու, որ այդ խախտումն ուղղակիորեն կամ ըստ էության ճանաչված լինի և որ.
 - ա. դատավարությունները, որքանով հնարավոր է, արագացվեն, կամ
 - բ. փոխհատուցումը տրամադրվի տուժողներին բոլոր այն վնասների դիմաց, որոնք նրանք կրել են կամ նախընտրելի է, որ

- զ. հատուցումը վճարվի այս երկու միջոցների համադրության համար,
8. ապահովեն, որ դատավարությունն արագացնելու կամ փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ դիմումներն արագ կերպով քննվեն իրավասու մարմնի կողմից և որ այն հանդիսանա արդյունավետ, համարժեք և մատչելի իրավական պաշտպանության միջոց,
 9. ապահովեն, որ այն փոխհատուցման գումարները, որոնք կարող են տրամադրվել, լինեն ողջամիտ և համատեղելի Դատարանի նախադեպային իրավունքի հետ և այս համատեքստում ճանաչեն այն ծանրակշիռ, սակայն հերքելի կանխավարկածը, որ դատավարության չափազանց երկար տևողությունը կարող է առիթ հանդիսանալ ոչ նյութական վնասի համար,
 10. ըստ իրադրության, քննարկեն չափազանց երկար տևողություն ունեցող քրեական կամ վարչական դատավարություններում ոչ դրամական փոխհատուցման որոշակի ձևերի, ինչպես օրինակ՝ պատժամիջոցների նվազեցման կամ վարույթի դադարեցման նախատեսումը,
 11. անհրաժեշտության դեպքում, ապահովեն, որպեսզի դատավարության չափազանց երկար տևողության խնդիրը լուծելու համար նախատեսված նոր միջոցառումներն ունենան հետադարձ ուժ, որպեսզի Դատարանում ընթացքի մեջ գտնվող գանգատները լուծվեն ազգային մակարդակով,
 12. ոգեշնչվեն և առաջնորդվեն սույն հանձնարարականին ուղեկցող Պատշաճ գործելակերպի ուղեցույցով այն դեպքերում, երբ հարց է առաջանում հանձնարարականի դրույթների կատարման հետ կապված և, այս կապակցությամբ, ապահովեն, որպեսզի սույն հանձնարարականի և Պատշաճ գործելակերպի ուղեցույցի տեքստը, անհրաժեշտության դեպքում՝ երկրի լեզվով (լեզուներով) թարգմանված, հրատարակվի և տարածվի այնպիսի եղանակով, որ ապահովի հանրության արդյունավետ իրազեկումը և որ ազգային իշխանություններն էլ հաշվետու լինեն դրա համար:

Նախարարների կոմիտեի Rec(2003)17 հանձնարարականն անդամ պետություններին «Կատարման մասին»

*(ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից
2003 թվականի սեպտեմբերի 9-ին, իր 851-րդ
նստաշրջանի ընթացքում)*

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն,

Գիտակցելով, որ եվրոպական ժողովրդավարությունների հիմքում ընկած իրավունքի գերակայության սկզբունքը կախված է արդար, արդյունավետ և մատչելի դատական համակարգերին ցուցաբերվող աջակցությունից,

Հաշվի առնելով, որ դատական ակտի կատարումը հանդիսանում է մարդու հիմնարար իրավունքի՝ արդար դատաքննության բաղկացուցիչ մաս՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի (այսուհետ՝ «ՄԻԵԿ»),

Ընդունելով, որ իրավունքի գերակայության սկզբունքը կարող է իրացվել միայն, եթե քաղաքացիները գործնականում հնարավորություն ունենան պաշտպանել իրենց օրինական իրավունքները և վիճարկել անօրինական ակտերը,

Հաշվի առնելով, որ անդամ պետությունները պարտավորություն են ստանձնել ապահովելու, որ յուրաքանչյուր անձ, որը ստացել է դատարանի վերջնական և պարտադիր ուժ ունեցող վճիռ, իրավունք ունի պահանջել, որպեսզի այն ի կատար ածվի: Նման վճռի չկատարումը կամ կատարման հետաձգումը կարող է ուժը կորցրած և թվացյալ դարձնել այդ իրավունքը՝ ի վնաս կողմերից որևէ մեկի,

Համոզված լինելով նրանում, որ անհրաժեշտ է խթանել քաղաքացիական գործերով կայացված վճիռների առավել արդյունավետ և արդարացի կատարումը, ինչպես նաև դրական հավասարակշռություն գտնել կատարողական վարույթի մասնակիցների իրավունքների և շահերի միջև,

Տեղյակ լինելով այն վտանգի մասին, որ առանց կատարման արդյունավետ համակարգի, կարող են թափ հավաքել այսպես կոչված «մասնավոր արդարադատության» այլ ձևերը, որոնք բացասական հետևանքներ կունենան իրավական համակարգի և դրա նկատմամբ արժանահավատության վերաբերյալ հանրության վստահության վրա,

Հիշեցնելով Թիվ 3 բանաձևը, որը ընդունվել է 2001թ. հոկտեմբերի 4-ից մինչև 5-ը Մոսկվայում տեղի ունեցած Եվրոպական արդարադատության Նախարարների 24-րդ համաժողովի ընթացքում, որը նվիրված էր «Դատական ակտերի արդյունավետ կիրարկմանը հասնելու ընդհանուր մոտեցմանը և միջոցներին» թեմային, և որի ընթացքում համաձայնություն էր ձեռք բերվել, որ «դատական ակտերի պատշաճ, արդյունավետ և գործուն կատարումը կարևորագույն նշանակություն ունի պետությունների համար՝ ուժեղ և հարգանք վայելող դատական համակարգ ստեղծելու, հզորացնելու և զարգացնելու հարցում»,

Նկատի ունենալով Նախարարների կոմիտեի կողմից 2002թ. սեպտեմբերի 18-ին ընդունված Res(2002)12 բանաձևը, որը հիմնադրում է Արդարադատության արդյունավետության հարցերով Եվրոպական հանձնաժողովը (CEPEJ),

Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների նշանակությունը կատարման գործընթացի արդյունավետության բարելավման հարցում և այս ոլորտում Եվրոպայի խորհրդի համապատասխան իրավական փաստաթղթերը, այդ թվում՝ Rec(2003)14 հանձնարարականը «Արդարադատության ոլորտում տեղեկատվական համակարգերի փոխգործունակության մասին» և Rec(2003)15 հանձնարարականը «Իրավական ոլորտում փաստաթղթերի էլեկտրոնային արխիվացման մասին»,

Առաջարկում է, որպեսզի անդամ պետությունների կառավարությունները.

- Նպաստեն դատական ակտերի արդյունավետ և շահավետ կատարմանը, և անհրաժեշտության դեպքում նաև այլ դատական կամ արտադատական որոշումների կատարմանը,
- ձեռնարկեն կամ, ելնելով հանգամանքներից, ուժեղացնեն բոլոր այն միջոցառումները, որոնք նրանք անհրաժեշտ են համարում, հաշվի առնելով ստորև ներկայացվող «Կատարման վերաբերյալ ուղենիշային սկզբունքները» իրացնելու աճող պահանջը:

Կատարման վերաբերյալ ուղենիշային սկզբունքները

I. Սահմանումները

Այս հանձնարարականի նպատակների համար.

- ա. «Կատարում» է համարվում դատական ակտերի, ինչպես նաև կատարման ենթակա այլ դատական կամ արտադատական որոշումների՝ օրենքով սահմանված կարգով ի կատար ածումը, որով պատասխանողը հարկադրված է կատարել, ձեռնպահ մնալ կամ վճարել այն ինչ վճռվել է,
- բ. «Հարկադիր կատարող» է համարվում այն անձը, որին պետությունը լիազորում է իրականացնել կատարողական վարույթը՝ անկախ այն հանգամանքից, որ պետությունն է հանդիսանում այդ անձի գործատուն, թե ոչ,
- գ. «Պահանջատեր» է համարվում այն կողմը, որի օգտին պետք է կատարվի դատական ակտը,
- դ. «Պարտապան» է համարվում այն կողմը, որը պարտավոր է կատարել դատական ակտը:

II. Կիրառման շրջանակը

- 1. Սույն հանձնարարականը վերաբերում է քաղաքացիական գործերին, այդ թվում՝ առևտրային, սպառողական, աշխատանքային և ընտանեկան իրավունքին առնչվող: Այն չի վերաբերում վարչական գործերին: Սույն հանձնարարականը կարող է նաև վերաբերվել քրեական այն գործերին, որոնք չեն առնչվում ազատագրկման հետ:
- 2. Ավելին, սույն հանձնարարականը վերաբերում է դատական ակտերի, ինչպես նաև կատարման ենթակա այլ դատական կամ արտադատական որոշումների կատարմանը:

III. Կատարողական վարույթը

- 1. Կատարողական վարույթն առավել արդյունավետ և գործուն լինելու համար.

- ա. կատարումը պետք է սահմանվի և դրա հիմքերը հստակ նախատեսվեն օրենսդրությամբ, որով կարգավորվում են մասնակիցների և երրորդ անձանց լիազորությունները, իրավունքները և պարտականությունները,
- բ. կատարումը պետք է իրականացվի համաձայն համապատասխան օրենքի և դատական ակտերի: Ցանկացած օրենք պետք է բավարար չափով մանրամասն լինի, որպեսզի ապահովի կատարողական վարույթի իրավական որոշակիությունը և թափանցիկությունը, ինչպես նաև դրա առավել կանխատեսելիությունը և արդյունավետությունը,
- գ. կողմերը պարտավոր են պատշաճ կերպով համագործակցել կատարողական վարույթի շրջանակում: Բացի այդ, և մասնավորապես՝ ընտանեկան գործերով, համապատասխան մարմինները պետք է նպաստեն այդ համագործակցության կայացմանը,
- դ. պարտապանները պետք է տրամադրեն վերջին տեղեկատվությունը իրենց եկամուտների, գույքի և համապատասխան այլ հարցերի վերաբերյալ,
- ե. պետությունները պետք է մեխանիզմ ստեղծեն՝ կանխելու կատարողական վարույթի չարաշահումը կողմերից որևէ մեկի կողմից, որը չպետք է վերածվի գործի կրկնակի քննության,
- զ. կատարողական վարույթը չպետք է հետաձգվի, եթե դրա համար օրենքով նախատեսված հիմքեր չկան: Հետաձգումը կարող է վերանայվել դատարանի կողմից,
- է. կատարողական վարույթի ընթացքում անհրաժեշտ է պատշաճ հավասարակշռություն գտնել պահանջատերերի և պարտապանների շահերի միջև, հաշվի առնելով, մասնավորապես, ՄԻԵԿ 6-րդ և 8-րդ հոդվածների դրույթները: Անհրաժեշտության դեպքում, երրորդ անձանց շահերը նույնպես պետք է հաշվի առնվեն: Երբ կատարողական վարույթը վերաբերում է ընտանեկան գործերին, ընտանիքի անդամների շահերը պետք է հաշվի առնվեն: Բացի այդ, երբ կատարողական վարույթը վերաբերում է, մասնավորապես, երեխաների իրավունքներին, երեխայի շահերը պետք է հանդի-

սանսան քննարկման առաջնակարգ առարկա՝ համաձայն միջազգային և ազգային օրենսդրության,

ը. պարտապանի հիմնական միջոցները և եկամուտը պետք է պաշտպանված լինի, որը վերաբերում է հիմնական տնտեսական արանքներին, հիմնական սոցիալական նպաստներին, առաջնային բժշկական կարիքների համար նախատեսված դրամական գումարներին և անհրաժեշտ աշխատանքային գործիքներին:

2. Կատարողական վարույթը.

ա. պետք է հստակ կերպով սահմանված լինի և իրականացման առումով՝ դյուրին հարկադիր կատարողների համար,

բ. նախատեսում է կատարման ենթակա փաստաթղթերի սպառնիչ սահմանումը և ցանկը, ինչպես նաև դրանց ուժի մեջ մտնելու կարգը,

գ. հստակ կերպով սահմանում է պարտապանների, պահանջատերերի և երրորդ անձանց իրավունքները և պարտականությունները, այդ թվում՝ վերջին երկու անձանց դեպքում՝ պահանջատերերի միջև բաժանման ենթակա գումարների նկատմամբ նրանց հերթականությունը և պահանջի իրավունքը,

դ. ապահովում է փաստաթղթաշրջանառության առավել արդյունավետ և պատշաճ միջոցների կիրարկությունը (օրինակ՝ հարկադիր կատարողների մասնավոր ծառայությունը, էլեկտրոնային միջոցները, փոստը),

ե. ապահովում է ընթացակարգային խախտումները զսպելու և կանխելու միջոցները,

զ. նախատեսում է կողմերի իրավունքը, համաձայն որի նրանք կարող են դիմել կատարումը կասեցնելու պահանջով՝ ապահովելու նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունը,

է. անհրաժեշտության դեպքում նախատեսում է կատարողական վարույթի ընթացքում ընդունված դատական և արտադատական որոշումների վերանայման իրավունքը:

3. Կատարման ծախսերը պետք է լինեն ողջամիտ, նախատեսված օրենքով, որի մասին կողմերը պետք է նախօրոք տեղեկացվեն:
4. Կատարողական վարույթը իրականացնելու փորձերը պետք է համաչափ լինեն պահանջին, բռնագանձման ենթակա ակնկալվելիք հասույթին, ինչպես նաև պարտապանի շահերին:
5. Կատարման համար անհրաժեշտ ծախսերը, որպես կանոն, կրում է պարտապանը, չնայած հնարավոր է, որ ծախսերը բաշխվեն այլ կողմերի միջև, եթե նրանք խախտեն վարույթը:
6. Պարտապանի գույքի հետախուզումն և դրա վրա կալանք դնելը պետք է որքան հնարավոր է արդյունավետ իրականացվի, հաշվի առնելով մարդու իրավունքների և տվյալների պաշտպանության համապատասխան դրույթները: Պարտապանի գույքի նկատմամբ անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրումը պետք է իրականացվի արագ և արդյունավետ կերպով՝ գրանցամատյաններում և այլ աղբյուրներում պարունակվող կարևոր տեղեկատվությունը հասանելի դարձնելու միջոցով, ինչպես նաև պարտապաններին հնարավորություն ընձեռնելով իրենց գույքը հայտարարագրել:
7. Գույքը պետք է անհապաղ վաճառվի՝ փորձելով այն օտարել շուկայական ամենաբարձր գնով և խուսափելով ցանկացած թանկարժեք և ավելորդ արժեզրկումից:

IV. Հարկադիր կատարողները

1. Այն դեպքերում, երբ պետությունները դիմում են հարկադիր կատարողներին՝ իրականացնելու կատարողական վարույթը, դրանք պետք է ենթարկվեն սույն հանձնարարականում տեղ գտած սկզբունքներին:
2. Հարկադիր կատարողների կարգավիճակը, դերակատարությունը, պարտականություններն ու իրավասությունները պետք է նախատեսված լինեն օրենքով, որպեսզի կատարողական վարույթը, որքան հնարավոր է, համապատասխանի որոշակիության և թափանցիկության սկզբունքներին: Պետությունները պետք է ազատ լինեն հարկադիր կատարողների մասնագիտական կարգավիճակը որոշելու հարցում:

3. Հարկադիր կատարողներին աշխատանքի ընդունելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել թեկնածուների բարոյական չափանիշները և համապատասխան օրենքի և ընթացակարգի վերաբերյալ նրանց ունեցած իրավաբանական գիտելիքներն ու փորձը: Այս կապակցությամբ, նրանք պետք է քննություն հանձնեն, որով կգնահատվի նրանց տեսական և գործնական գիտելիքները:
4. Հարկադիր կատարողները պետք է լինեն արժանապատիվ և բանիմաց իրենց պարտականությունները կատարելու հարցում և բոլոր դեպքերում գործեն համաձայն ընդունված մասնագիտական և էթիկայի բարձր չափանիշների: Նրանք պետք է անկողմնակալ լինեն կողմերի հետ ունեցած իրենց հարաբերություններում և ենթարկվեն մասնագիտական ստուգման և վերահսկողության, որի մեջ կարող է նաև մտնել դատական վերահսկողությունը:
5. Հարկադիր կատարողների իրավասություններն ու պարտականությունները պետք է հստակ կերպով սահմանված լինեն և չհամընկնեն դատավորի ունեցած իրավասությունների ու պարտականություններին հետ:
6. Հարկադիր այն կատարողները, որոնք ենթադրաբար չարաշահել են իրենց պաշտոնը, պետք է ենթարկվեն կարգապահական, քաղաքացիական պատասխանատվության և/կամ քրեական հետապնդման՝ ապահովելով համապատասխան պատժամիջոցների առկայությունը խախտում արձանագրված դեպքերի համար:
7. Պետական աշխատող հանդիսացող հարկադիր կատարողները պետք է ունենան աշխատանքային պատշաճ պայմաններ, համարժեք մարդակալիկ ռեսուրսներ և օժանդակող անձնակազմ: Նրանք պետք է նաև համապատասխանաբար վարձատրվեն:
8. Հարկադիր կատարողները պետք է անցնեն նախնական և շարունակական վերապատրաստում՝ հաշվի առնելով հստակ սահմանված և մանրակրկիտ կերպով համակարգված խնդիրներն ու նպատակները:

**Նախարարների կոմիտեի Rec(2003)16 հանձնարարականն անդամ պետություններին
«Վարչական իրավունքի ոլորտին վերաբերող վարչական և դատական ակտերի կատարման մասին»**

*(ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից
2003 թվականի սեպտեմբերի 9-ին, իր 851-րդ նստաշրջանի
ընթացքում)*

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամների միջև առավել սերտ միասնության հասնել,

Հաշվի առնելով, որ անհրաժեշտ է պահպանել մասնավոր անձանց վստահությունը վարչական և դատական համակարգերի առնչությամբ, այս կապակցությամբ, ենթակա են կատարման թե՛ վարչական մարմինների ակտերը, որոնք պարտականություններ են առաջացնում մասնավոր անձանց համար, և թե՛ վարչական իրավունքի ոլորտին վերաբերող դատական ակտերը, որոնք ճանաչում են մասնավոր անձանց իրավունքները,

Հաշվի առնելով, որ վարչական մարմինների գործունեությունն ենթադրում է, որ իրենց ակտերը արդյունավետորեն կատարվում են մասնավոր անձանց կողմից,

Հաշվի առնելով, որ վարչական ակտերի կատարումը առնչվում է մասնավոր անձանց իրավունքների և շահերի հետ,

Հիշեցնելով այս կապակցությամբ այն ընդհանուր սկզբունքները, որոնք կարգավորում են անձի պաշտպանվածությունը՝ վարչական մարմինների գործողությունների առնչությամբ, ինչպես սահմանված է Թիվ (77)31 բանաձևում, և այն սկզբունքները, որոնք վերաբերում են վարչական մարմինների կողմից հայեցողական լիազորությունների իրականացմանը, ինչպես սահմանված է Թիվ R (80) 2 հանձնարարականում,

Հիշեցնելով նաև Թիվ R (89) 8 հանձնարարականը «Վարչական գործերով Նախնական դատական պաշտպանության մասին», որը պահանջում է իրավասու դատական մարմնից ձեռնարկել Նախնական պաշտպանության համապատասխան միջոցներ, եթե վարչական ակտի կատարումը կարող է ծանր վնաս առաջացնել այն մասնավոր անձանց համար, որոնց վերաբերյալ այն կայացվել է,

Հաշվի առնելով, որ արդարադատության արդյունավետությունը պահանջում է, որպեսզի վարչական իրավունքի ոլորտին վերաբերող դատական ակտերը կատարվեն, մասնավորապես, երբ դրանք առնչվում են վարչական մարմիններին,

Հիշեցնելով այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով պաշտպանվող այն իրավունքները, որոնց շարքում ողջամիտ ժամկետում դատական ակտերի կատարումը պետք է իր ուրույն տեղը ունենա,

Հիշեցնելով նաև Թիվ R (84) 15 հանձնարարականը «Պետական պատասխանատվության մասին», որն առաջարկում է անդամ պետություններին ընդունել համապատասխան կառուցակարգեր ապահովելու, որ միջոցների բացակայությունը չի խոչընդոտում պետական իշխանությունների պարտականությունների կատարմանը պետական պատասխանատվության ոլորտում,

Հիշեցնելով, վերջապես, Թիվ 3 բանաձևը, որը ընդունվել է 2001թ. հոկտեմբերի 4-ից մինչև 5-ը Մոսկվայում տեղի ունեցած Եվրոպական արդարադատության Նախարարների 24-րդ համաժողովի ընթացքում, որը նվիրված էր «դատական ակտերի արդյունավետ կիրարկմանը հասնելու ընդհանուր մոտեցմանը և միջոցներին», հրավիրելով Եվրոպայի խորհրդին «բացահայտելու եվրոպական մակարդակում տիրող դատական ակտերի կիրարկմանը վերաբերող ընդհանուր չափանիշները և սկզբունքները»,

Առաջարկում է անդամ պետությունների կառավարություններին ապահովել վարչական իրավունքի ոլորտին վերաբերող վարչական և դատական ակտերի արդյունավետ կիրարկումը՝ հետևելով իրենց օրենսդրությունում և պրակտիկայում սույն հանձնարարականին կից հավելվածում ներկայացված լավ գործելակերպի սկզբունքները:

I. Մասնավոր անձանց առնչվող վարչական ակտերի կատարումը

Կիրառության շրջանակը. այս մասում ներկայացված սկզբունքները կիրառելի են ցանկացած անհատական միջոցի կամ որոշման նկատմամբ, որը կայացվել է պետական կառավարում իրականացնելիս և այնպիսի բնույթ է կրում, որ անմիջականորեն կարող է ազդեցություն ունենալ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքների, ազատությունների և շահերի վրա:

1. Իրագործումը

ա. Անդամ պետությունները պետք է ընդունեն համապատասխան օրենսդրություն՝ ապահովելու, որ մասնավոր անձինք կատարում են այն վարչական ակտերը, որոնց մասին իրենց օրենքով սահմանված կարգով տեղեկացրել են՝ անկախ դատական իշխանությունների կողմից նրանց իրավունքների և շահերի պաշտպանության հնարավորության առկայությունից:

բ. Այն դեպքերում, երբ օրենքը չի նախատեսում, որ վարչական ակտի դեմ ներկայացված բողոքն ակամա առաջացնում է դրա կասեցում, մասնավոր անձինք պետք է հնարավորություն ունենան դիմելու վարչական կամ դատական մարմին՝ կասեցնելու վիճարկվող ակտի կատարումը՝ ի ապահովումը նրանց իրավունքների և շահերի պաշտպանության:

գ. Այս հնարավորությունը պետք է օգտագործել ողջամիտ ժամկետում՝ խուսափելու վարչական մարմինների գործունեության անհարկի արգելափակումը և ապահովելու իրավական որոշակիությունը:

դ. Կասեցման մասին դիմումը քննարկելու ընթացքում վարչական և, եթե օրենքով այն չի բացառվում՝ դատական մարմնի կողմից պետք է հաշվի առնվի առկա հանրային շահը և երրորդ անձանց իրավունքները և շահերը:

2. Կատարումը

ա. Վարչական մարմնի կողմից կատարմանը դիմելը պետք է պայմանավորված լինի հետևյալ երաշխիքներով.

- i. կատարումը պետք է ուղղակիորեն նախատեսված լինի օրենքով,
- ii. մասնավոր այն անձինք, որոնց նկատմամբ կայացված վարչական ակտը ենթակա է կատարման, հնարավորություն պետք է ունենան ողջամիտ ժամկետում ինքնուրույն այն կատարել, բացառության անհետաձգելի և պատշաճ կերպով հիմնավորված դեպքերի,
- iii. կատարմանը դիմելը և դրա հիմնավորումը պետք է ներկայացվի այն մասնավոր անձանց ուշադրությանը, որոնց նկատմամբ կայացված վարչական ակտը ենթակա է կատարման,
- iv. կիրառված կատարման միջոցները, ներառյալ՝ դրան ուղեկցող ցանկացած դրամական պատժամիջոց, պետք է պահպանի համաչափության սկզբունքը:

բ. Հրատապ դեպքերում, կատարողական վարույթի ծավալը պետք է համաչափ լինի գործի հրատապությանը:

գ. Մասնավոր անձինք պետք է հնարավորություն ունենան կատարողական վարույթի դեմ ներկայացնել բողոք դատական մարմնին՝ ի ապահովումը նրանց իրավունքների և շահերի պաշտպանության:

դ. Եթե վարչական մարմինը չի դիմում կատարման ընթացակարգին, ապա այն անձինք, որոնց իրավունքները և շահերը պաշտպանվում են չկատարված վարչական ակտով, հնարավորություն պետք է ունենան դիմելու դատական մարմնի:

II. Վարչական մարմիններին առնչվող դատական ակտերի կատարումը

1. Ընդհանուր դրույթներ

ա. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ վարչական մարմիններն ողջամիտ ժամկետում կատարեն դատական ակտերը: Որպեսզի այս վարչական ակտերը լիովին ի կատար ածվեն, դրանք պետք է ձեռնարկեն օրենքով նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցները:

բ. Վարչական մարմնի կողմից դատական ակտի չկատարման դեպքերում պետք է նախատեսվեն պատշաճ ընթացակարգեր այդ ակտի կատարումն ապահովելու համար, մասնավորապես՝ դատական արգելքի կամ հարկադիր տուգանքի միջոցով:

գ. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի վարչական մարմինները ենթարկվեն պատասխանատվության այն դեպքերում, երբ դրանք հրաժարվում են կամ անտեսում կատարել դատական ակտերը: Դատական ակտերի կատարման համար պատասխանատու պետական պաշտոնյաները կարող են նաև անհատապես պատասխանատվության ենթարկվել կարգապահական, քաղաքացիական կամ քրեական վարույթների շրջանակում, եթե նրանք չեն կատարում դրանք:

2. Դատական ակտերի կատարումը, որը առաջացնում է որոշակի գումարի վճարման պարտականություն

ա. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ այն դեպքերում, երբ վարչական մարմինները պարտավոր են վճարել որոշակի գումար, այդ պարտականությունը կատարեն ողջամիտ ժամկետում:

բ. Վարչական մարմնի կողմից վճարվող տոկոսները, որոնք գոյանում են որոշակի գումարի վճարման պարտականությունն առաջացնող դատական ակտերի չկատարման հետևանքով, պետք է լինեն ոչ պակաս, քան մասնավոր անձի կողմից վարչական մարմնին նման իրավիճակում վճարման ենթակա տոկոսները:

- գ. Անհրաժեշտ է ապահովել, որ վարչական մարմինն ունենա համապատասխան իրավական հիմքեր՝ խուսափելու այն իրավիճակից, երբ միջոցների բացակայությունը կարող է խոչընդոտ հանդիսանա որոշակի գումար վճարելու իր պարտականության կատարման համար:
- դ. Վարչական մարմնի կողմից որոշակի գումարի վճարման պարտականություն առաջացնող դատական ակտերի չկատարման ժամանակ անդամ պետությունները պետք է նաև հաշվի առնեն վարչական մարմինների գույքի՝ օրենքով նախատեսված սահմաններում արգելանքի վերցնելու հնարավորության առաջ գալը:

**Գործողությունների վերաբերյալ զեկույց
հետևյալ գործերով վճիռների իրականացման վերաբերյալ**

09.04.2010թ.

Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի (no. 31237/03, վճիռը կայացվել է 02.12.2008թ.)

Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի (no. 22390/05, վճիռը կայացվել է 02.12.2008թ.)

Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի (no. 41698/04, վճիռը կայացվել է 02.12.2008թ.)

Բոլոր այս գործերով Դատարանը վճռել է հետևյալը՝

- Տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմումատուների կալանքի պայմանների հետ:
- Տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի զուգակցմամբ, բանի որ խախտվել է դիմումատուների արդար դատաքննության իրավունքը՝ մասնավորապես կապված այն բանի հետ, որ վերջիններիս չի տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություն իրենց դեմ հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրենց պաշտպանությունը նախապատրաստելու համար:
- Տեղի է ունեցել թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

Բոլոր երեք գործերով Դատարանը վճռեց, որ վճիռը ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում ՀՀ-ն դիմումատուներին պետք է վճարի հետևյալ գումարները՝

- 4,500 (չորս հազար հինգ հարյուր) եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ փոխարկված պատասխանող պետության ազգային արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:
- 3,000 (երեք հազար) եվրո՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում, որը պետք է վճարվի ֆուկս ստեռլինգով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, Միացյալ Թագավորությունում ներկայացուցիչների բանկային հաշվին:

Անհատական բնույթի միջոցներ

- (i) Երեք վճիռները թարգմանվել են հայերեն և հրապարակվել ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում (www.moj.am) 2009թ. օգոստոսի 4-ին, ինչպես նաև հրապարակվել ՀՀ պաշտոնական տեղեկագրում:
- (ii) Վճիռները ուժի մեջ մտնելուց հետո վեց ամիսների ընթացքում Հայաստանի իշխանությունները վճարել են դիմումատուներին և նրանց ներկայացուցիչներին արդարացի փոխհատուցում:

Ընդհանուր միջոցներ

- (i) 2004թ. դեկտեմբերի 28-ին ընդունված Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆԿ-328-ՆԳ հրամանագրի համաձայն վերականգնման մեծածավալ ծրագիր էր նախաձեռնվել ոստիկանական պահման վայրերում: 2005թ. հուլիսի 8-ին Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը փոփոխվել է, համաձայն որի ոստիկանական պահման վայրերում ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տաբանության չափը սահմանվել է 4 քմ՝ յուրաքանչյուր անձի համար:

2006թ. Հայաստան կատարած իր այցելության ժամանակ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ) ողջունեց Հայաստանի իշխանությունների կողմից իրականացրած վերականգնման մեծածավալ ծրագիրը և օրենքում արված փոփոխությունները: 2008թ. մարտի 15-17-ը Հայաստան կատարած իր այցելության վերաբերյալ զեկույցում՝ ուղղված Հայաստանի կառավարությանը, Կոմիտեն նշել է, որ ոստիկանական հաստատություններում կալանքի պահման պայմանները չեն փոխվել Կոմիտեի նախորդ այցելությունից հետո (2006թ.) և ընդհանուր առմամբ համապատասխան մակարդակի են եղել:

- (ii) Դատարանի կողմից այս երեք գործերով արձանագրված 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտումը՝ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի զուգակցմամբ չի համարվել օրենսդրական բացի արդյունք, այն ավելի շուտ պրակտիկայի պակասի արդյունք է: Այս առումով, ինչպես վերը նշվեց, բոլոր երեք վճիռներն էլ թարգմանվել են հայերեն և հրապարակվել համապատասխան պաշտոնական տպագիր և էլեկտրոնային հրապարակումներում: Վճիռների

հայերեն տարբերակը նաև ուղարկվել է իշխանության համապատասխան մարմիններին՝ նրանց ուշադրությունը հրավիրելու Կոնվենցիայի պահանջների վրա և կանխելու նման հնարավոր խախտումները հետագայում:

(iii) 2005թ. դեկտեմբերի 16-ին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով վարչական կալանքի ինստիտուտն (օրենսգրքի հոդված 31) ուժը կորցրած է ճանաչվել: Այս փոփոխության արդյունքում Հայաստանում այլևս գոյություն չունի վարչական կալանք և հետևաբար թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածի խախտումները, որոնք արձանագրվել էին Դատարանի կողմից այս երեք գործերով, չեն կարող տեղի ունենալ հետագայում:

Գործողությունների վերաբերյալ զեկույց

Մինասյանի և Սեմերջյանի գործով խումբ

21 մայիսի 2013թ.

Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի (no. 27651/05, վճիռ՝ 23.06.2009թ., ուժի մեջ է մտել 23.09.2009թ., վճիռ՝ 07.06.2011թ., ուժի մեջ է մտել 07.09.2011թ.),

Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի (no. 5065/06, վճիռ՝ 20.07.2010թ., ուժի մեջ է մտել 20.10.2010թ., վճիռ՝ 15.11.2011թ., ուժի մեջ է մտել 15.02.2012թ.),

Երանոսյանը և այլոք ընդդեմ Հայաստանի (no. 13916/06, վճիռ՝ 20.07.2010թ., ուժի մեջ է մտել 20.10.2010թ.):

I. Անհատական բնույթի միջոցներ

Արդարացի փոխհատուցման վճարում

Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի՝ վճարվել է 14-ը դեկտեմբերի 2011թ.,

Հովհաննիսյանը և Շիրոյանը ընդդեմ Հայաստանի՝ վճարվել է 17 ապրիլի 2012թ.,

Երանոսյանը և այլոք ընդդեմ Հայաստանի՝ արդարացի փոխհատուցում չի տրվել:

Դատարանը անհրաժեշտ չի համարել անհատական բնույթի այլ միջոցառումների իրականացում:

II. Ընդհանուր միջոցներ

Կառավարությունը ցանկանում է նշել, մասնավորապես, ձեռնարկված հետևյալ ընդհանուր միջոցները.

Ա. Վճռի վերաբերյալ տեղեկատվության տարածում

Վճիռը թարգմանվել է հայերեն և տեղադրվել ՀՀ Արդարադատության նախարարության կայքէջում (Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաս-

տանի, արդարացի փոխհատուցում, 23 սեպտեմբերի 2009թ. և 13 հունվարի 2012թ., Հովհաննիսյան և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի, արդարացի փոխհատուցում, 20 հուլիսի 2010թ. և 15 նոյեմբերի 2011թ., Երանոսյանը և այլք ընդդեմ Հայաստանի, 10 հոկտեմբերի 2010թ.): Գործում ներգրավված իշխանության համապատասխան մարմինները պատշաճ կերպով տեղեկացվել են վճռի մասին, ինչպես նաև նրանց տրամադրվել է վճռի թարգմանությունը: Այն նաև համապատասխան կերպով տարածվել է:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը և *վերը նշված գործերը* մասնավորապես, ներառվել են Ոստիկանության Ակադեմիայի, Դատախազների և Դատավորների դպրոցների համար նախատեսված դասընթացների ուսուցողական ծրագրում, քաղ. ծառայության համար նախատեսված դասընթացներում, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի համար կազմակերպված դասընթացներում:

Բ. Ընդունված օրենսդրական միջոցներ

2006թ. ապրիլի 18-ին ՀՀ Սահմանադրական դատարանն որոշում ընդունեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 104, 106, 108 հոդվածների, ինչպես նաև 2002թ. օգոստոսի 1-ի Կառավարության թիվ 1151-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

2006թ. ապրիլի 18-ին ընդունած որոշմամբ ՍԴ-ն գտավ, որ վերը նշված իրավական ակտերի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին: Հետևաբար, մինչ ՄԻԵԴ վճռի կայացումը, օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ գործընթացը սկսվել և ընդունվել էր: ՍԴ համապատասխան որոշումից հետո, որոշակի միջոցառումներ ձեռնարկվեցին բարելավելու սեփականության իրավունքի հետ կապված օրենսդրությունը՝ համապատասխանեցնելու այն միջազգային չափանիշներին և կանխելու նման բնույթի խախտումները հետագայում:

Այս առումով, Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին ՀՀ օրենքը ընդունվեց 2006թ. նոյեմբերի 27-ին: Սույն օրենքը նպատակ ուներ համահունչ լինել 2005թ. ՍԴ բարեփոխումներով սահմանված դրույթներին: Համաձայն սահմանադրական և վերը նշված օրենքի դրույթի՝ հասարակության և պետության կարիքների

համար սեփականության օտարումը պետք է իրականացվի «օրենքով սահմանված կարգով», օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական համարժեք փոխհատուցում: Համապատասխան օրենքը սահմանել է Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման «գործընթացը», ինչպես նաև նախնական համարժեք փոխհատուցումը: Այն նաև սահմանել է բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշման վերաբերյալ սահմանափակումներ:

Եզրակացություն

Վերը նշվածի համաձայն՝ Կառավարությունը կարծում է, որ ձեռնարկված համապատասխան անհատական և ընդհանուր բնույթի միջոցները լիովին վերացնում են դիմումատուների համար ստեղծված հետևանքները, համապատասխան կերպով բարելավել են անձին սեփականությունից զրկելու հիմնախնդրի և գույքի օգտագործման իրավունքի հետ կապված իրավիճակը, և հետևաբար, հետագայում կկանխեն նման բնույթի խախտումները:

Կառավարությունը կարծում է, որ այս միջոցները բավարարեն իր կողմից՝ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասով ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Գործողությունների Ցրագիր

Բայաթյանի գործով խումբ

25.02.2013թ.

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի

(no. 23459/03)՝ Մեծ Պալատ, վճիռը ուժի մեջ է մտել 07/07/2011թ.

Բուխարաթյանն ընդդեմ Հայաստանի

(no. 37819/03)՝ Վճիռը հրապարակվել է 10.01.2012թ., վճիռը ուժի մեջ է մտել 10.04.2012թ.

Ճատուրյանն ընդդեմ Հայաստանի

(no. 3782/01)՝ վճիռը հրապարակվել է 10.01.2012թ., վճիռը ուժի մեջ է մտել 10/04/2012թ.

Գործի համառոտ նկարագրություն

Բայաթյանի գործով Դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ տեղի է ունեցել դիմումատուի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի խախտում:

2009թ. հոկտեմբերի 27-ի վճռում նշվել է, որ Եվրոպայի հտորհրդի անդամ պետությունների մեծամասնությունն ընդունել է օրենքներ, որոնցով նախատեսվում են կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար այլընտրանքային ծառայության հնարավորությունը: Սակայն, Կոնվենցիայի 9-րդ հոդվածը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել նաև Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի դրույթները («3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում՝ ... (բ) զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը»), որը պայմանավորվող կողմերի հայեցողությանն է թողել

կրոնական համոզմունքներից ելնելով գինավորական ծառայությունից հրաժարվող անձանց իրավունքների ճանաչման հարցը: Դատարանը, հետևաբար, որոշել է, որ 9-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

2010թ. մայիսի 10-ին, հիմք ընդունելով դիմումատուի կողմից 2010թ. հունվարի 25-ին ներկայացրած պահանջը, Մեծ Պալատի հանձնախումբը որոշեց գործը հանձնել Մեծ Պալատին, որը եզրակացրեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում:

I. Անհատական բնույթի միջոցներ

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի՝ Արդարացի փոխհատուցում (20,000 եվրո), վճարվել է 2012թ. օգոստոսի 23-ին:

Բուխարայանն ընդդեմ Հայաստանի՝ Արդարացի փոխհատուցում (10,000 եվրո), վճարվել է 2012թ. հունիսի 15-ին:

Ծատուրյանն ընդդեմ Հայաստանի՝ Արդարացի փոխհատուցում (10,000 եվրո), վճարվել է 2012թ. հունիսի 15-ին:

Բայաթյանի, Ծատուրյանի և Բուխարայանի դատվածությունները մարվել են 2006թ. հուլիսի 22-ին, օգոստոսի 28-ին և դեկտեմբերի 11-ին, քանի որ վերջիններս դատապարտվել էին մինչև 3 տարվա ազատազրկման միջին ծանրության հանցագործությունների համար և պայմանական վաղաժամկետ ազատվել են պատիժը կրելուց: Այս անձանց դատվածությունների մարման իրավական հիմքը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 5-րդ մասով. «Եթե անձն օրենքով սահմանված կարգով պայմանական վաղաժամկետ ազատվել է պատիժը կրելուց, կամ պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժով, ապա դատվածությունը մարելու ժամկետը հաշվարկվում է հիմնական պատիժը և լրացուցիչ պատիժը կրելուց ազատելու պահից»:

Ինչ վերաբերվում է ընդհանրապես դատվածություն չունենալու փաստին (դատվածության վերաբերյալ տվյալների բացակայություն), ապա գործող օրենսդրությունը նախատեսում է այդ նորմը որոշ պայմաններով (ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մաս): Այնուամենայնիվ, համաձայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրի-

նագծի 1-ին հոդվածի՝ վերը նշված անձինք կհամարվեն նախկինում ընդհանրապես դատվածություն չունեցող:

Պրն. Բայաթյանի, Բուխարաթյանի և Ծատուրյանի դատվածության վերաբերյալ տվյալները կվերացվեն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումները ընդունելուց հետո:

II. Ընդհանուր միջոցներ

Կառավարությունը ցանկանում է նշել, մասնավորապես, ձեռնարկված հետևյալ ընդհանուր միջոցառումները.

Բայաթյանի, Բուխարաթյանի և Ծատուրյանի գործերով վճիռները թարգմանվել են հայերեն և տեղադրվել Արդարադատության նախարարության կայքէջում 2011թ. հոկտեմբերի 7-ին և 2012թ. հունվարի 10-ին: Գործումներգրավված իշխանության համապատասխան մարմինները պատշաճ կերպով տեղեկացվել են վճռի մասին, ինչպես նաև նրանց տրամադրվել է վճռի թարգմանությունը: Այն նաև համապատասխան կերպով տարածվել է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը և Բայաթյանի, Բուխարաթյանի և Ծատուրյանի գործերը մասնավորապես ներառվել են Ոստիկանության Ակադեմիայի, Դատախազների և Դատավորների դպրոցների համար նախատեսված դասընթացների ուսուցողական ծրագրում, քաղ. ծառայության համար նախատեսված դասընթացներում, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներին աշխատակազմի համար կազմակերպված դասընթացներում:

2011թ. հուլիսի 7-ին Մեծ Պալատի կողմից Բայաթյանի գործով վճռի ընդունումից հետո, կառավարությունը նախաձեռնեց մի քանի միջոցառումներ բարելավելու և, եթե անհրաժեշտ է, փոփոխելու «Այլընտրանքային ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքները, որպեսզի դրանք համապատասխանեցվեն միջազգային չափանիշներին և կանխվի նման բնույթի հետագա խախտումները:

Այս առումով, ՀՀ Արդարադատության նախարարությունը մշակել է «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ինչպես նաև, «Հայաստանի Հանրապետության

քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ օրինագծերը: Համապատասխան փոփոխությունների և լրացումների վերաբերյալ օրինագիծ մշակելիս հաշվի է առնվել Վենետիկի հանձնաժողովի կարծիքը:

Համաձայն նախատեսված օրենսդրական փոփոխությունների՝ անձը, ով կրում է պատիժը կամ մեղադրվում է իր խղճի և կրոնական համոզմունքների համար, ազատ կարձակվի, եթե մինչև 2013թ. օգոստոսի 1-ը դիմի համապատասխան մարմին՝ այլընտրանքային ծառայություն անցնելու համար, և այդ մարմինը այնուհետև, պետք է որոշում ընդունի նրան այլընտրանքային ծառայության ուղարկելու վերաբերյալ: Այդ անձի դատվածության վերաբերյալ տվյալները կվերացվեն համապատասխանաբար: Նաև, այլընտրանքային ծառայության ժամկետը կկրճատվի մինչև պատժի փաստացի կրման ժամկետը:

Դատվածության վերաբերյալ տվյալները կվերացվեն այն անձի համար, ով դատապարտվել է խղճի և կրոնական համոզմունքների համար և համապատասխանաբար. ա) կրել է պատիժը, բ) պայմանական վաղաժամկետ ազատվել է, գ) կրում է պատիժը:

Ինչ վերաբերում է Մեծ Պալատի կողմից Բայաթյանի գործով վճռի ընդունումից հետո ստեղծված իրավիճակին, ներպետական դատարանները չեն կիրառում այն նույն հիմնավորմամբ: Համաձայն գործող Քրեական օրենսգրքի՝ անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, ինչպես որ նախատեսված է Քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով՝ զինվորական, ինչպես նաև այլընտրանքային ծառայություն անցնելուց խուսափելու համար: Այնուամենայնիվ, «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի ընդունումը 2003թ.-ին թույլ է տալիս կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց անցնել այլընտրանքային ծառայություն, ինչը գոյություն չունեի այն ժամանակաշրջանում, երբ վերը նշված երեք դիմումատուները դատապարտվել էին:

Ավելին, հաշվի առնելով Բայաթյանի գործով վճիռը՝ Դատախազությունը որևէ քրեական գործ չի ուղարկել դատարան՝ կապված այն անձանց հետ, ովքեր հանցագործություն են կատարել՝ կրոնական համոզմունքներից ելնելով հրաժարվել են զինվորական ծառայությունից 2012թ. սեպտեմբեր ամսվա ավարտից սկսած:

Ավելին, հետևյալ էական փոփոխությունները, ի թիվս այլոց, կատարվել են «Այլընտրանքային ծառայության մասին» օրինագծում.

- Ա. Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացումը կազմակերպում և վերահսկում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:
- Բ. Այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը կկրճատվի 36 ամսից մինչև 30 ամիս:
- Գ. Այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը կկրճատվի 42 ամսից մինչև 36 ամիս:
- Դ. Հանրապետական հանձնաժողովը (այլընտրանքային ծառայություն անցնելու մասին դիմումներ քննարկող մարմինը) մշտապես գործող մարմին է և կազմված է տարածքային կառավարման, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, ոստիկանության և պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների մեկական ներկայացուցիչներից: Հնարավոր այլընտրանքային ծառայության վերաբերյալ ներկայացրած դիմումը քննարկվում է Հանրապետական Հանձնաժողովի կողմից: Դիմում ներկայացնող քաղաքացին իրավունք ունի մասնակցել իր դիմումի վերաբերյալ կազմակերպված հանձնաժողովի նիստին: Մեկ ամսվա ընթացքում հանրապետական հանձնաժողովը քննարկում է դիմումը և որոշում կայացնում դիմումը ներկայացրած քաղաքացուն այլընտրանքային ծառայության ուղարկելու կամ դիմումը մերժելու մասին:
- Ե. Դիմումի մերժման հիմքերը կսահմանվեն ավելի ճշգրտորեն: Մասնավորապես, այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ ներկայացված ակնհայտ անհիմն դիմումը կարող է, ի թիվս այլ հանգամանքների, հանդիսանալ մերժման հիմք:

«Այլընտրանքային ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության բրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերը ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով:

Եզրակացություն

Վերը նշվածի համաձայն՝ Կառավարությունը կարծում է, որ անհատական և ընդհանուր բնույթի համապատասխան միջոցները լիովին կվերացնեն դիմումատուի համար ստեղծված հետևանքները, համապատասխան կերպով կբարելավեն խղճի և կրոնական համոզմունքների հետ կապված ներկայիս իրավիճակը և հետագայում կկանխեն նմանատիպ խախտումները:

Հայաստանի իշխանությունները Նախարարների կոմիտեին պարբերաբար տեղեկատվություն կտրամադրեն բոլոր նոր զարգացումների վերաբերյալ:

Գործողությունների ծրագիր

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի (no. 44068/07, վճիռ 20.12.2011թ.)

15.01.2013թ.

Գործի համառոտ նկարագրություն

Պողոսյանի գործը վերաբերում է դիմումատուի անօրինական կալանքի հետ կապված խախտումներին, մասնավորապես՝ 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում (2007թ. հունիսի 13-ից հուլիսի 2-ն ընկած ժամանակահատվածում կալանքի տակ պահելու իրավական հիմքի բացակայություն), 3-րդ մասի խախտում (դիմումատուի ձերբակալումից հետո դատարանի առջև չներկայացնելը), և 4-րդ մասի խախտում (դիմումատուի կողմից ներկայացված բողոքը քննելու վերաբերյալ մերժում):

Դիմումատուի բողոքները վերաբերում էին 2007թ. ապրիլին իր ձերբակալումից հետո կալանավորմանը՝ խարդախության և գողության մեղադրանքների հիման վրա: Դիմումատուն անհապաղ չի ներկայացվել դատարան և նրա կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածի մի մասը՝ 2007թ. հունիսի 13-ից հուլիսի 2-ը ընկած ժամանակահատվածը, անօրինական է եղել: Կալանքի տակ գտնվելու դեմ դիմումատուի կողմից ներկայացված բողոքներից մեկը չի քննվել:

I. Անհատական բնույթի միջոցներ

ՄԻԵԴ-ն իր կայացրած վճռում որոշեց, որ Հայաստանի կառավարությունը պետք է դիմումատուին վճարի 10,000 (տաս հազար) եվրո, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը, որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ որը պետք է փոխարկվի ՀՀ դրամի՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արդարացի փոխհատուցման վճարում

Տվյալներ արդարացի փոխհատուցման վերաբերյալ

Ոչ նյութական վնասի փոխհատուցում	Ամբողջ գումարը
10,000 եվրո	10,000 եվրո
Վճարվել է 15.06.2012թ.	

Դատարանը անհրաժեշտ չի համարել անհատական բնույթի այլ միջոցառումների իրականացում:

II. Ընդհանուր միջոցներ

Կառավարությունը ցանկանում է նշել, մասնավորապես, ձեռնարկված հետևյալ ընդհանուր միջոցառումները.

Ա. Վճռի վերաբերյալ տեղեկատվության տարածում

Վճիռը թարգմանվել է հայերեն և տեղադրվել ՀՀ արդարադատության նախարարության կայքէջում (http://moj.am/legal/browse/p/judgements_of_european_court/): Գործում ներգրավված իշխանության համապատասխան մարմինները պատշաճ կերպով տեղեկացվել են վճռի մասին, ինչպես նաև նրանց տրամադրվել է վճռի թարգմանությունը: Այն նաև համապատասխան կերպով տարածվել է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը և Պողոսյանի գործը մասնավորապես, ներառվել են Ոստիկանության ակադեմիայի, Դատախազների և Դատավորների դպրոցների համար նախատեսված դասընթացների ուսուցողական ծրագրում, քաղ. ծառայության համար նախատեսված դասընթացներում, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի համար կազմակերպված դասընթացներում:

Բ. Օրենսդրական միջոցներ

(ii) Անձի ազատության իրավունքի անօրինական սահմանափակման հետ կապված հարցը լուծվել է 2009թ.ապրիլի 10-ին ՀՀ վճռաբեկ դատա-

րանի կողմից կայացրած թիվ 3/0106/01/08 որոշմամբ, որտեղ ամրագրվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենքի 138-րդ հոդվածի 3-րդ մասում առկա կարգավորումը հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ և 136-րդ հոդվածի 2-րդ մասերին: ՄԻԵԴ-ն այս որոշումը վկայակոչել է այս գործով վճռում:

Այդ որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ կալանքի երկամսյա ժամկետի ավարտին մնացել է 15 օրից քիչ ժամանակ, այսինքն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկի կայացման ժամկետից պակաս ժամանակ, նախաքննական մարմինը գործը դատարան ուղարկելու հետ միաժամանակ պետք է լուծի նաև անձի կալանքի հարցը, այն է՝ պետք է անձին ազատ արձակի, եթե վերացել են նրան կալանքի տակ պահելու հիմքերը, կամ դատարանին միջնորդություն ներկայացնի կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ, եթե առկա են համապատասխան հիմքերը:

Հետևաբար, համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնասման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Այնուամենայնիվ, կառավարությունը հաշվի է առել նաև նախատեսել վերը նշված իրավական դրույթը քրեական դատավարության նոր օրենսգրքով, որի վերաբերյալ նախագծի վերջնական տարբերակի համաձայն՝ եթե մեղադրյալը կալանավորված է, ապա մեղադրական եզրակացությունը քրեական գործի հետ միասին դատարան է հանձնվում ոչ ուշ, քան մեղադրյալի կալանքի ժամկետը լրանալուց 15 օր առաջ (հոդված 208, մաս 2):

316-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ստանալով քրեական գործը՝ դատավորը երկօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ եթե պահպանված չէ սույն օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը, ապա դատարանն առանց նախնական դատալուծման անցկացնելու մասին որոշում կայացնելու՝ քրեական գործը վերադարձնում է հսկող դատախազին:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ նախնական դատալուծմեն-րով առաջին դատական նիստը նշանակվում է սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված որոշման կայացումից հետո երկշաբաթյա ժամկետում:

(ii) Ինչ վերաբերվում է Պողոսյանի գործով վճռում տեղ գտած հետևյալ հիմնահարցերին՝ ձերբակալումից հետո դատարանի առջև չներկայացնելը (հոդված 5, 3-րդ մաս) և դիմումատուի կողմից ներկայացված բողոքը քննե-լու վերաբերյալ մերժումը (հոդված 5, 4-րդ մաս), ապա դրանց անդրադարձ է արվել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացրած մի քանի վճիռներում, ինչպես նաև դրանք տեղ են գտել Քրեական դատավարության օրենսգրքի վերաբերյալ նախագծում:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2008թ. նոյեմբերի 28-ին և 2008թ. դեկտեմ-բերի 26-ին կայացրած թիվ 0299/01/08 և 0235/06/08 որոշումներում մեկ ուրիշ քրեական գործի շրջանակներում գտել է, որ անձի նկատմամբ կալան-քը որպես խափանման միջոց ընտրելու կամ նրան կալանքի տակ պահե-լու ժամկետը երկարացնելու մասին որոշումների՝ վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքի սահմանափակումը՝ ելնելով այն հանգամանքից՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, թե դատական քննության փուլում գտնվող գործի շրջանակներում են դրանք բողոքարկվել, անթույլատրելի է: Նշված որոշումներից առաջինը նաև մատ-նանշվել է Դատարանի կողմից Պողոսյանի գործով վճռում:

Բացի այդ, Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը այս առումով սահմանել է նորմ՝

Հոդված 396. Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակը, բողոքը բերելու ժամկետը և կարգը.

1. Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանի հետևյալ դատական ակտերը՝
2. խափանման միջոց կիրառելու վարույթի հարուցումը մերժելու, մինչդատական վարույթի շրջանակներում խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին.
3. Մինչդատական վարույթի շրջանակներում կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլ ընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին:

(iii) Վճռաբեկ դատարանի 2008թ. դեկտեմբերի 26-ին կայացրած թիվ 0197/06/08 մեկ ուրիշ որոշմամբ դատարանը անդրադարձել է ձերբակալումից հետո դատարանի առջև ներկայացվելու հետ կապված խնդրին: Վճռաբեկ դատարանը այս որոշմամբ գտել է, որ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի ընտրությունը չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ ձերբակալված անձի դատավորի մոտ անհապաղ տարվելու պահանջին: Այս որոշումը նույնպես ավելի ուշ մեջբերվել է Դատարանի կողմից կայացրած վճռում:

Հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի կողմից կայացրած որոշման մեջ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ այս խնդիրը նախատեսվել է Զբեական դատավարության օրենսգրքի նախագծով նույնպես, որի համապատասխան նորմի համաձայն՝

Հոդված 297. Կալանավորման հարցի վերստին քննարկումը և լուծումը

1. Եթե կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը կայացվել է առանց մեղադրյալի մասնակցության, ապա մեղադրյալին ՀՀ իրավագործության ներքո կալանավորելուց հետո վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է 48 ժամվա ընթացքում այդ անձին ներկայացնել իրավասու դատարան՝ նրա նկատմամբ կիրառված կալանքի հարցը վերստին քննարկելու համար:

Քրեական դատավարության նոր օրենսգիրքը Ազգային Ժողովի կողմից Նախատեսվում է ընդունել 2013թ. ընթացքում և ուժի մեջ մտնել 2014թ.:

Եզրակացություն

Վերը նշվածի համաձայն՝ Կառավարությունը կարծում է, որ ձեռնարկված համապատասխան միջոցառումները՝ քրեական դատավարության ոլորտում արված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև անհատական բնույթի միջոցառումները, լիովին կվերացնեն դիմումատուի համար ստեղծված հետևանքները, համապատասխան կերպով կբարելավեն անօրինական կալանքի, կալանքի տակ գտնվելու որոշման բողոքարկման իրավունքի, և ձերբակալված անձին՝ անհապաղ դատարան ներկայացման իրավունքի հետ կապված ներկայիս իրավիճակը, և հետագայում կկանխեն նմանատիպ խախտումները:

Հայաստանի իշխանությունները Նախարարների կոմիտեին պարբերաբար տեղեկատվություն կտրամադրեն Քրեական դատավարության օրենսգրքի ընդունման հետ կապված բոլոր նոր զարգացումների վերաբերյալ:

Եժովայի քրիստոնյա վկաների Եվրոպական ասոցիացիա

Կրոնի ազատության ենթահանձնաժողով

13 մայիսի 2013թ.

ՄԻԵԴ վճիռների կատարման բաժին

Մարդու իրավունքների և իրավական հարցերի Գլխավոր տնօրինություն

Եվրոպայի խորհուրդ

F-67075 Ստրասբուրգ Սեդեքս

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով խումբ

Գործ 23459/03 (վճիռը ուժի մեջ է մտել 7 հուլիսի 2011թ.)

Հարգելի Քարտուղար,

Մենք գրում ենք Ձեզ՝ վճիռների իրականացման նկատմամբ վերահսկողության վերաբերյալ Նախարարների կոմիտեի 9.2 կանոնի համաձայն: Մենք ցանկանում ենք պատասխանել Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով խմբի վերաբերյալ ստացված տեղեկատվությանը (Համար DH-DD (2013)269, 13 մարտի 2013թ.), որը պետք է քննարկվի 1172 DH նիստին (4-6-ը հունիսի 2013թ.):

2013թ. մայիսի 2-ին, ՀՀ Ազգային Ժողովն ընդունեց «Այլընտրանքային ծառայության մասին օրենքում կատարված փոփոխությունները: Քանի որ այս փոփոխությունների վերաբերյալ կարգավորումները դեռևս չեն ընդունվել, մենք պետք է սպասենք՝ տեսնելու համար, թե ինչպես է օրենքը գործում և արդյոք այն լիովին համապատասխանում է Եվրոպական չափանիշներին, ինչպես սահմանված է Եվրոպայի խորհրդի կողմից:

Մենք ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել այն լուրջ հանգամանքի վրա, որ կրոնական համոզմունքներից ելնելով գինվորական ծառայությունից հրաժարվող ազատագրված 32 անձինք, ովքեր հանդիսանում են Եժովայի վկաներ, կտուժեն փոփոխություններում առկա անօրինական դրույթի հետևանքով:

Ներկայիս «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերով նախատեսված դեպքերում սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված՝ այլընտրանքային ծառայության ժամկետը նվազեցվում է անձի՝ քրեական պատիժ կրելու կամ քրեական հետապնդման ենթարկվելու արդյունքում անազատության մեջ գտնվելու ժամկետով»:

Համաձայն այս կետի՝ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող ազատագրված անձը ազատ կարձակվի միայն այն դեպքում, եթե նա համաձայնի փոխարինել ազատագրվման մնացած ժամկետը այլընտրանքային ծառայությամբ, որի համար սահմանված է 36 ամիս: Օրինակ, եթե երիտասարդը կրել է իր պատժի 24 ամիսներից 22-ը, նա պարտավորվում է այլընտրանքային քաղաքացիական ծառայություն անցնել ևս 14 ամիս, չնայած այն հանգամանքին, որ վերջինիս պատժի կրման ավարտին մնացել է ընդամենը 2 ամիս:

Այս կետը օրինական չէ: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունները ընդունում են, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց դատապարտումը և ազատագրվումը, այն բանից հետո, երբ Հայաստանը դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ, անօրինական է: Փոփոխությունները, հետևաբար, նախատեսում են, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող բոլոր անձանց դատվածությունները, ովքեր դատապարտվել են 2002թ. ապրիլի 26-ից հետո, պետք է մարվեն և նրանց դատվածությունների վերաբերյալ տվյալները պետք է վերացվեն:

Նրանից հետևում է, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող բոլոր 32 ազատագրված անձինք հետապնդվել, դատապարտվել և ազատագրվել են և այժմ իրավունք ունեն անհապաղ ազատ արձակման և արդարացման: Նրանք չպետք է ստիպված լինեն տեղափոխվել այլընտրանքային ծառայության: Սա բազմիցս կոչ է արվել Եվրոպայի խորհրդի, Միացյալ ազգերի մարդու իրավունքների հանձնաժողովի և Վենետիկի հանձնաժողովի կողմից: Ինչպես սահմանված է Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով վճռի 139-րդ կետում (23978/06, 27 նոյեմբերի 2012թ.), նրանք չեն կարող ազատագրվման մեջ պահվել՝ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատար-

ված փոփոխությունների հիման վրա, որոնք չեն գործել, երբ նրանք դատապարտվել են: Պարզապես չկա օրինական հիմք նրանց ազատազրկման մեջ պահելու համար: Այս ազատազրկված երիտասարդներից շատերի ներկայացրած գանգատները անօրինական ազատազրկման վերաբերյալ գտնվում են ՄԻԵԴ վարույթում:

Ավելին, ծայրահեղ անարդար է պնդել, որ որպես ազատ արձակման պայման, կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձը, ով արդեն պատժվել է և կրել իր ազատազրկման ժամկետի 24 ամիսներից 22-ը, այժմ պետք է ընդունի այլընտրանքային ծառայության վերաբերյալ Նոր ծրագիրը և լրացուցիչ 14 ամսով այլընտրանքային ծառայություն անցնի:

Փոփոխությունը, համաձայն որի՝ նրանք ազատ կարձակվեն միայն այն դեպքում, եթե ընդունեն այլընտրանքային ծառայության անցնելը, պատժում է նրանց կրոնի ազատության դրսևորումը, որը հակասում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածին: Այն նաև հակասում է ԵԽԽՎ թիվ 221 կարծիքին, որի համաձայն Հայաստանը պարտավորվել է ազատ արձակել և «ներում շնորհել ազատազրկման դատապարտված խղճի բանտարկյալներին»: (Բայթյանն ընդդեմ Հայաստանի, կետ 50, 127):

Բացի այդ, զինվորական ծառայություն և «այլընտրանքային ծառայություն» անցնելուց հրաժարվելու հետևանքով արդեն իսկ անարժանիորեն հետապնդված և ազատազրկման ենթարկված լինելով՝ նրանք, ներկայումս ազատազրկման մեջ գտնվելով, չեն կարող ենթարկվել զինվորական կամ այլընտրանքային ծառայության կրկնակի զորակոչի: Սա արգելված է Եվրոպական կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության կրկին չդատվելու և չպատժվելու իրավունքի մասին (*ne bis in idem*) 4-րդ հոդվածի և Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետով:

Այս առումով, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի թիվ 32 ընդհանուր մեկնաբանությունը նշում է. «կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց կրկնակի պատիժը այն բանի համար, որ նրանք չեն ենթարկվել բանակում ծառայելու մասին վերանայված կարգին, կարող է համարվել պատիժ միևնույն արարքի համար, եթե նման մերժումը հիմնված է կրոնական համոզմունքներից բխող միևնույն անփոփոխ որոշման վրա»: (CCPR/C/GC/32, 55):

ՄԱԿ-ի Կրոնի կամ հավատքի ազատության հարցերով հատուկ զեկուցողը Թուրքմենստանի վերաբերյալ իր զեկույցում նշել է. (A/HRC/10/8/Add.4, 68) «Կառավարությունը պետք է երաշխավորի, որ Թուրքմենստանում խղճի բանտարկյալներին, մասնավորապես, Եհովայի վկաներին, ովքեր հրաժարվում են զինվորական ծառայությունից՝ ելնելով իրենց կրոնական համոզմունքներից, հնարավորություն կընձեռվի անցնել այլընտրանքային քաղաքացիական ծառայություն՝ համահունչ նրանց կրոնական համոզմունքներին: Կառավարությունը պետք է նաև վերանայի Չինապարտության և Չինվորական ծառայության մասին ակտը, որը վերաբերում է նույն հանցանքի համար երկրորդ անգամ դատապարտվելու հնարավորությանը: Հատուկ զեկուցողը ցանկանում է հիշեցնել, որ համաձայն «*ne bis in idem*» սկզբունքի՝ ամրագրված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետով՝ ոչ ոք չպետք է կրկին դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել՝ յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:»

Կանխավ շնորհակալություն վերը նշվածը քննարկելու համար: Հուսով ենք, որ այս տեղեկատվությունը օգտակար կլինի, քանի որ Դուք մոնիթորինգ եք իրականացնում *Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով* Մեծ Պալատի կողմից կայացրած վճռի կատարման նկատմամբ: Մենք պատրաստ ենք տրամադրել Ձեր կողմից պահանջվող որևէ այլ տեղեկատվություն կամ փաստաթղթեր:

Հարգանքներով՝
Փոուլ Ս. Գիլլիս
Մարք Հանսեն

ՄԻԵԴ վճիռների կատարման բաժին
Մարդու իրավունքների և իրավական հարցերի Գլխավոր տնօրինու-
թյուն
Եվրոպայի հորիզոն
F-67075 Ստրասբուրգ Սեդեքս
Ֆրանսիա

31 Մայիսի 2013թ.
Լոնդոն, Միացյալ Թագավորություն

**2012թ. հուլիսի 12-ին կայացրած ՄԻԵԴ վճիռի կատարման վերաբե-
րյալ տեղեկատվություն (ուժի մեջ է մտել 17 դեկտեմբերի 2012թ.)**

Գործ՝ 3627/06

Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի

Հարգելի Պարոն,

Վերը նշված վճիռի կատարման համար նախատեսված ժամկետը
ավարտվել է 2013թ. մարտի 17-ին:

Համաձայն վերը նշված վճիռ՝ Դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել
Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ քրեական գործով վա-
րույթի տևողության հետ կապված: Հետևյալ դիտարկումները հանդիսացել
են բավարար հիմք Դատարանի համար եզրակացնելու, որ քրեական գոր-
ծով վարույթի տևողությունը եղել է չափից ավելի երկար և խախտվել է «ող-
ջամիտ ժամկետ»-ի պահանջը՝

Ա. Դատարանը գտել է, որ իմ նկատմամբ քրեական գործը հարուցվել է
2005թ. հունիսի 10-ին: Նույնիսկ եթե հենց այդ պահից սկսած մինչև իմ ձեր-
